Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

20952

891.99.04
9-86

891.99.09
Գ-86

N 1992

(31)

ԲՐԻԶ

ԳՆՆՈՒԹԵԱՄԲԲ

ՊԱՏԱՍԽԱՆ ԵՒ ՀԵՐՔՈՒՄՆ

„ԳՐԻԶ“

Ստորագրութեամբ տպեալ “Մատենախօսութեան„ որ կը տեղեալ կայ՝ “ՓՈՐՁ“ եռամսեայ հանդիսի՝ երկրորդ տարի № III 1877—78 գրքի մէջ յէջք՝ 337-348։

ԳՈՐԾ

ԱՐԳԱՐՈՒ Ս. ԳՈՒԼԱՄԻՐԵԱՆՑ

30
ՀՀՀ-Գ

ՏՓԽԻՍ

1879—ՌՑԻԸ

Обертка напечатана въ Эрив. Типог. З. Кеворкова и К-о

8682

891.99.09
Գ-86
300
Հայ-գոր

N 1992

ԲՐԻՉ

Քննութեամբ

ՊԱՏԱՍԽԱՆ ԵՒ ՀԵՐՔՈՒՄՆ

,,ԳՐԻՉ"

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI. 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Սորագրութեամբ տպեալ ,,Մատենախօսութեան զետեղեալ կայ՝ ,,ՓՈՐՁ" եռամսեայ հանդիսի՝ երկրորդ տարի № III 1877—78 գրքի մէջ յէջք՝ 337—348։

ԳՈՐԾ

ԱԲԳԱՐՈՒ ՍՏԵՓԱՆՆՈՍԵԱՆ
ԳՈՒԼԱՄԻՐԵԱՆՑ

2003

Дозволено цензурою. Тифлисъ, 12 Февраля 1879 г.

ՏՓԽԻՍ
ՏՊԱՐԱՆ ԵՂԲ. Ս. Հ. Ա. ԴԱՒԹԵԱՆՑ
1879—ՌՑԻԸ

ԲՐԻՉ

Քննութեամբք պատասխան և հերքումն

,,ԳՐԻՉ'' սաորագրութեամբ սպեալ Մատենասօսութեան՝ որ զետեղուած է ,,ՓՈՐՁ'' Ազգային և Գրականական եռամսեայ հանդիսի՝ բ. տարուայ № III 1877—1878 գրքի մէջ. սկսեալ 337 մինչև 348 երեսները: Գործ ԱԲԳԱՐՈՒ Ս. ԳՈՒԼԱՄԻՐԵԱՆՑ:

,,Իմաստակ կըսուի այն մարդը՝ որ իրեն
,,արհեստ կանէ, մէջէ մէջ ճամբաներ ընտ-
,,րել և անընդհատ փաստեր գործածել՝
,,խաբելու նպատակով, զինքը կը քարոզէ
,,իբրև կենդանի իմաստութիւն, իր միտքը
,,գիտութեան հանք կ'համարի. կ'պարծի,
,,կուռի... և հրապարակ կիջնէ ռամիկներուն
,,բան ծախելու:,,

,,Արևմուտք'' համար 6.

,,Ուր որ ճշմարտութիւն չկայ՝ այնտեղ
,,չկայ և հաստատութիւն, մանաւանդ որ,

,,ճշմարտութիւնն լինելով լուսաւորութեան
,,միակ հիմն ու սկզբունքն՝ ասել է թէ,
,,ա՛յնպիսեայ ճիշդն և ջանքն՝ խախո՛ւտ և
,,անհիմն են—ուշ կամ կանուխ՝ բոլորովին
,,պիտի ոչնչանան:,,

Գրականական արդաւանդ պարտիզն մէջ, մնա օրերս գաղտնի ճանապարհով՝ մտաւ յանկարծ ,,Գրիչ'' անուամբ մի էակ. որ պինդ բռնել էր իւր ատամներով, մի Մատենախօսական զրուածք մեր նուաստութեան վերայ. դեռ շա՛տ հեռուից երևում էր՝ որ այդ յօդուածը, լի է ամենայն անվայելութեամբք և ընդդէմ մարդկային խղճի և իրաւանց. նորա ձեռքերը անպատմելի դողդողում էին, դէմքը սարսափելի այլայլուած՝ աչքերը սատակի կարմրած, և մազերը խառնուած ու ցրցուած. իսկ ոտները՝ մէկը դնելով միւսը վերցնելով. նորա շորերից կախուած էին զանազան տոմսակներ հետևեալ վերնագրովք՝ „Հարութիւն" „բռնութիւն" „եսականութիւն" „ամբարշտութիւն" „թշնամութիւն" „ատելութիւն" „կըպարտութիւն" „կիրք" „քէն" „նախանձ" և „ոխ": Նորա ապադէմ և դժնեայ սրտի ձէնկիզխանական դառնութիւնը՝ կարծես յետ էր բերում 1154 թուականի բռնութիւնքը, որ տիրապետէ գրականական աշխարհը. ուստի և մենք, ահա՛ փութամք մատենագրական լայն և ընդարձակ անդաստանի մէջ պատասխանելու՝—

Ա.հա՛ այսպէս է գրում Պ Գրիչը, ,,Օրացոյց ,,1878 թուականին Գրիստոսի և ԾԱՂԻԿ ԸՆՏԱՆԵԱՅ,

,,խմբագիր և հրատարակիչ Աբգար Ստեփաննոսեան
,,Գուլամիրեանց. Յերևան: Գինն է 30 կպ. (Գրակա-
,,նական աչքակապութիւն.),,

Ընդհանո՛ւր մարդկութեանը, ամենայն պարզութեամբ յայտնի է՝ ո՛ր և իցէ մի քննիչ՝ նախ սկսում է իւր քննութիւնը, և ապա երբ վերջացնում է նա՝ յա՛յնժամ յայտնում է իւր կարծիքը. իսկ պ. Գրիչը՝ այդպէ՛ս չընթացաւ. այլ՝ իւր յօդուածի սկզբում, դե՛ռ չքննած մեր Օրացոյցը, դե՛ռ ընթերցողն առաջ չներկայացրած՝ դեռ նորա ներքի՛ն և արտաքի՛ն բովանդակութեանց մէջ չմտած՝ յառաջ է գալիս նա յանդգնաբար գրելով՝ ,,Գրականական աչքակապութիւն.,, որով տարաբաղդաբար, ցո՛յց է տալիս լայնածաւալ աշխարհին՝ իւր անհասութիւնը մատենախօսակա՛ն բովքի մէջ: Զարմանալին և այն է, որ այդ ,,Գրականական աչքակապութիւն.,, իւր գրածը՝ կցել է վերնագրի հետ. որ կարծես թէ, այդ ևս տպուած է մեր օրացոյցի վերնագրում, ահա թէ որքան աններելի է այս ընթացքը՝ թողում եմ դատել խոհական անձանց: Եւ այսպէս սկսում է պ. Գրիչը (1) իբր մատենախօսութիւն անել (քաջութիւն) և ի՞նչ, կարծես խոր տարտարոսական երազների մէջ ընկղմուած՝ յանկարծ վեր է թռչում, և երկու ձեռով գլուխը քորելուց և

(1) Մենք գիտենք, թէ ո՞վ է „Գրիչը“. թո՛ղ նա որքան կամենայ վարագուրուած մնայ. երբ և՝ իցէ՝ իւր խայտառակութեամբն հանդերձ՝ ինքն իրեն ցոյց կտայ յայտնապէս ընթերցողաց:

ականջները տրօրելուց յետոյ՝ ճպռոտ աչքերով, յառաջ է գալիս նա՝ ա՞յնպիսի պառաւական առասպելաբանութեամբք՝ և անմարս ճոռոմաբանական բանիւք՝ որ ընթերցողը կամայ և ակամայ զզվում է. և այսպէս անկապ, անիմա՛ստ, դատարկաբանութեամբք՝ լցրա՛ծ է սիրելի ընթերցող, ամբողջ հինգ երես. կարծես թէ դիմակաւոր ճարտասանը առաջին անգամն է դուրս գալիս գրականական ասպարիզում: Դո՛ւք, Պ. Գրի՛չ, եթէ սկսում էիք մատենախօսութիւն՝ ուրեմն պիտոյ էր ձեզ անշուշտ սկսել գործը և գործողութիւնը, ամենա՛յն անկեղծ անաչառութեամբ. որպէս օրէ՛նն է գրաքննութեան (թէ՛ և այդ հեռո՛ւ էր ձեզնից) և ո՛չ թէ վայրապար խօսելով անխոհեմաբար թղթերը մրօտել և անցնել. որով երևի թէ երազում իւր հօրն ու մօրն ժամ է արել՝ որ ցատկելով զոռում է՝ „շլապկաւ (շլապկաւ) և անուշ ապուր“ և այսպէս աչքերը ճմռելով զարթնում է Պ. Գրիչը, և 341 երեսի 34 տողից սկսեալ կամենում է ի՛բրև թէ քննել մեր գրուածքը. (վա՞նց չէ) արտագրելով „Մեր բաժանորդագրութեամբ ի լոյս ընծայելը ու-„րիշ բան չէր, եթէ ոչ որքան կարելի է շուտով „հրատարակել այս գիրքը, մոցնելով միանգամայն „մեր եղբարց և քերց գոգը, որի վախճանը հոգւով „փափագում ենք և սրտով ցանկանում, որ մեր սի-„րելի ժողովրդեանը առհասարակ ծանօթ լինի և „օգտակար: Մեր ամենակերպ աշխատութիւնը և „ջանքը մեր իրաւատէր խեղճ հասարակութեան եղ-

„բարցս և նրանց զառնուկ զաւակների օգտին հա-
„մար է. որոնց ցանկանում ենք ամենակերպ հնար-
„քով ցոյց տալ ընթերցանութեան ամենակարևորու-
„թիւնը և նորա քաղցրիկ ճաշակը. որով որ ժա-
„մանակին երևելի մարդկանց դասի պիտի դասուին“:

Ահա՛ այսքան ամբողջ կտորը հանում է պ. Գրիչը մեր „Դաւիթ Բէգի“ յառաջաբանից՝ որ իբր պէտք է քննէ մեր ինն և տասներորդ դարու հռչակաւոր դիւցազն հերոսը. ահա՛ դորա քննութիւնը,— „Ի՞նչ կարող է աւելի անկեղծ, հասկանալի ու համոզիչ լինել“ ցեսա՞ր սիրելի ընթերցո՛ղ, որ պ. Գրիչը գոնէ չէ ամաչում իւր ինքնակոչ պաշտօնովը. մի՛թէ ա՞յդ էր քննութեան կարգն՝ որ ինքն իրեն աւելի և ես խայտառակում է . . : Ցեռոյ ճոխաբանելով ասում է՝ „Զարմանալի էակ է այս պ. Գուլամիրեանցը. իւր վաճառական տեղովը (²) նա այնպիսի „եռանդ է ցոյց տալիս զանազան ազգասիրական „ձեռնարկութիւնների մէջ, որ միամիտ մարդիկ ապ- „շած մնացել են, և միայն մի քանի թերահաւատներ „պնդում են թէ այդ ձեռնարկութիւնների շարժա- „ռիթը ոչ թէ ազգի՝ այլ սեպհական գրպանի օ-

(²) Այստեղ պա՛րզ ի պարզոյ երևում է յաւակցաբար, որ պ. Գրիչ խմաստակի ամբողջ յօդուածը ո՛չ այլ ինչ է՝ եթէ ոչ կիրք: Սորանից միքանի ամիս առաջ՝ մի ամենականաւոր անձն՝ որ մեզ խիստ յաւ ճանաչում է, ասաց՝ „Պ. Գուլամիրեա՛նց մինչ „շատ վատ կրքոտ պատրաստվում է գրականական յար- „ձակում անել ձեր դէմ. „թէ և նոյն պարոնը ասել

զուսան է:„ Պ. Գրիչ. այստեղ ձեր մանկական դատողութեան վերայ մի խո՛ր ծիծաղելուց յետոյ՝ պատասխանում ենք,—այո՛, ո՛վ Ազգային հռետոր Պ. Գրիչ! մենք վաճառական ենք, և միևնոյն միջոցը՝ և գրականութեամբ խի՛ստ պարապող, միևնոյն ժամանակը՝ և խմբագրիչ, և հրատարակիչ. և ո՞չ թէ ձեզ նման լոկ երևի ուսուցիչ, որ կարծեմ թողել էք արտասահմանում ձեր հայրենիքը, և ընակվում էք Ցիխիսում. կարծեմ գրել էք քանի մի կտոր գրքոյկներ, որոնք մենք տեսել ենք. և այդ բոլորը՝ ի հարկէ ձեր կեցութեան և հարստութեան համար է, որ առանց դոցա՝ ի՞նչ կարծիք չէք կարող ապրուստ ճարել: Բայց մե՛նք արդէն բոլորովին ապահովուած, Աստուծոյ ողորմութեամբն՝ ունի՛նք հիմնաւոր առևտրական տուն, սկսեալ 1835 թուականից. որ ահա՛ յընթացս 43 տարուայ մէջ՝ մի՛շտ առևտրական յարաբերութիւնքն շարունակաբար սկսուած է Ռուսաստանի ականաւոր առևտրական տանց հետ. ուստի՝ ինչպէս տեսնվում է ձեր մարամիտ գրուածից՝ ցանկալի կլինի ձեզ հասկանա՛լ՝ և կշռե՛լ՝ թէ՝ ո՛ւմ հետ էք գո՛րծ

էր՝ „որ կսխալուէք„ բայց նա պնդում է ասել՝ „թէ պէտք է գրեմ:„ Ցեսա՞ք յարգելի ընթերցողք, որ գրականութեան մաքուր այգւոյ մէջ ևս թագաւորացրեց Պ. Գրիչը, ո՛խ, նախանձ և ատելութիւն, և այսպէս արատաւորեց մատենագրական արգաւանդ դաշտը, որ ամբողջ քանի մի ամիս կարկատում էր գրականութեան կոշկակարը,—Պ. Գրիչը:

մտնում...: Եւ այսպէս դիալոկագէտ պ. Գրիչը ծիծաղում է իմ վերայ՝ թէ ես վաճառական գոլով պարապում եմ գրականութիւնով: Խոստովանում եմ այո՛ որ մինչև ցա՛յդ աստիճան տգէտ չէի կարծում նորան: Հարցանում եմ՝ ինչո՞ւ վաճառականը իրաւունք չունի գրականութեամբ պարապելու. մի՞թէ պիտի պարապեն միմիայն դոկտորներն և մագիստրոսներն: Վասնորոյ մե՛զ՝ որ այդպիսի միմոսական կրիտիկոսներին պատահում ենք աղգիս մէջ,—ծիծաղէ նա ուրեմն և Լէօնարդօ Դավինչիի վերայ, որ ծաղկեցաւ 15 երորդ դարումն, որ ամենատեսակ գիտութիւններ գիտէր և զանազան արհեստներ. ծիծաղէ նա ուրեմն և Հումբօլտի վերայ՝ որ բազմակողմանի գիտնական անձն էր... ծիծաղէ նա ուրեմն և Նիկոլայ Պօլէվոյի վերայ՝ որ վերջին դարուոյս մատենագիր, վաճառական և ականաւոր անձն էր...:

Հարցանում եմ՝ ի՞նչ է ձեր զարմանքը. մի՞թէ վաճառականները ողջ յիմա՞ր են. մի՞թէ նոցա այդքան ստո՞ր է համարում (հսկայութիւն) հանի՛ր ականջներիդ բուրթը՝ և լսիր. և բաց արա՛ աչքերդ՝ ու տե՛ս ով Գրիչ, այս ինն և տասներորդ ուսումնաճաւալ դարս, զոռալով և պնդելով պահանջում է հանուր աշխարհի մէջ, սկսեալ՝ յետին աղքատից մինչև ամենահարուստը, ռամիկներից մինչև պայազատը՝ և աղնուականը, գիւղացուց մինչև քաղաքացին, արհեստաւորից մինչև վաճառականը, և վերջապէս գինուորից մինչև սպարապետը՝ որոնց անհրաժեշտ է պարտականութեամբ սովորել՝ ուսում

և գիտութիւն և ի հարկէ այս բոլորը, յառաջ է գալիս ո՛չ այլ ինչով, եթէ ոչ՝ ընթերցանութեամբ և ահա՛ դու ո՛վ ինքնակոչ անհա՛շտ թշնամի Ազգային լուսաւորութեան, զարմանում ես որ վաճառականներից արդէն կա՛ն այնպիսիները՝ որոնք ձեզապիսիներից քանի՛ քանի՛ անգամ բարձր են զբաղնվում իւրեանց տուած պտուղներովը, (մի կողմ դընելով դրամականը, որին ձեռք բերելու համար սկսել ես գրականութեան մէջ միմոսութիւններ անել ո՛վ Գրիչ) և արդէն տեսնում է՛ք ակն յանդիման որ ձեր այսուհետև գրականական գործերը՝ խորխորատ վիհերի մէջ պիտի խորասուզուին: Գնա՛ց ա՛յն ժամանակը՝ որ ձեզապէսներով խաբվում էին Հայկական անմեղ և իրաւատէր հասարակութիւնը. գնա՛ց ասում ենք այն միջոցը՝ երբ մի տեսակ վարժապետք ևս ,,աղգասէր,, ասելով խաբում էին Ազգը. արդէն իրաւատէր Հայ ժողովուրդը խի՛ստ լաւ խորիմաստութեամբ ճանաչել է ձեզապիսի յարգելի պարոնների գործերը...: Ափսո՛ս որ եսականութիւնը ձեզ յաղթել է պ. Գրի՛չ և դուք մոլորուած է՛ք. լաւ համոզուեցէ՛ք, թէ՛ վաճառականաց՝ թէ՛ ուսուցչաց՝ թէ՛ քահանայից՝ թէ՛ վարդապետաց՝ թէ՛ եպիսկոպոսաց՝ և թէ՛ բոլոր միւս դասակարգի անձանց մէջ՝ կա՛ն՝ ամենատեսակը. մի՞թէ չկա՞ն այժմ ձեզպէս վանմախօս ուսեալներ, որոնք իրենց վկայագրերը (diploma) ստանալուց յետոյ՝ այնպէս և սառա՛ծ են մնացել. ուրեմն ինչի՞ չէ՛ք վառում նոցա. ինչի՞ չէ՛ք բորբոքում, որ նոքա յառաջ

խաղա՞ն՝ և ձեզ պէս խառնաշփոթ քննիչներ դուրս գան. չէ՞ որ Հայոց Ազգը կբաղդաւորուէր: Հարցնում ենք, այդ ո՞ր ,,միամիտ մարդիկն են ապշած մնացել,, մենք դիտենք ի հարկէ, որ այդ իսկ և իսկ դո՛ւք էք, յարգոյապատիւ Գրի՛չ և մեր հակառակորդքը. բայց քեզ բարեկամական խորհուրդ եմ տալիս, որ այդքան ,,ապշած,, մնալով դուք ձեզ կամաւ կ՚վնասէք. հարկաւոր է զգուշանալ վտանգից: Իսկ ինչ որ անպատկառելով պնդում էք՝ ,,թէ այդ ձեռնարկութիւնների շարժառիթը ոչ թէ ազգի՝ այլ սեպհական զրպանի օգուտն է:,, եթէ այդպէս՝ ուրեմն դուք պ. Գրի՛չ երևի ծածուկ ճանապարհով մտելէք մեր գրպանը, որ մենք չենք տեսել. այո՛ յիշում ենք, որ այդպիսի կախարդական մարգարէութեամբ էլ ուրմատական հնարքներ լինում էին չորրորդ դարումն, կրակապաշների օրերում, երևի դտել է՛ք մաղաղաթի վերայ այդպիսի մի գրուածք 15 կանոնն երկայնութեամբ. և որը հեղհետէ պիտի եռամեայ հանդէս ,,փորձի՚՚ի մէջ գրելով հրատարակէք հետևեալ վերնագրով՝ ,,Ցաղագս լուսաւորութեան Ազգային Կրթութեան՚՚ յիրաւի՛ այդ շտապելու է. որ մի զեղեցիկ միջո՛ց է ձեր պարէնի և հարստութեան համար. առ սակաւն, կարելի է հաշուել՝ որ 2 տպագրական թերթ կլինի. ուրեմն կստանաք դորա վճարը անշուշտ ,,ՓՈՐՁԻ՚՚ Պ. խմբագրից: Ես կարծում եմ, որ եթէ ,,ՓՈՐՁԸ՚՚ լոյս աշխարհ չ՚երևար՝ դուք դա՞ռնեալ կը վերադառնայիք հայրենիք ապրուստի դուռը գտնելու:

Գուցէ ես իմ շահու համար եմ պարապում գրականութեամբ. բայց ինքդ Պ. Գրի՛չ ինչո՞ւ ես պարապում. Ազգդ սիրելո՞ւդ համար՝ թէ՛ ,,փորձի՚՚ հրատարակչից յօդուածներիդ համար, ապրուստի փող ստանալու...:Խոստովանիր՝ թէ ապրուստի համար ես գրում, և ո՛չ թէ Ազգդ սիրելուդ՝ և նորան օգուտ բերելու նպատակաւ առանց գրամական օգուտ ստանալու: Ազգիս օգտին աշխատողներից՝ յայտնի են մեզ քանի մի անձինք, որոց մէջ հաստատապէս կարող ենք սնդել և ասել՝ թէ՛ չկայ Պ. Գրիչը:

Վերջապէս մենք մեր արդար վստակովը՝ բոլորովին ապահովուած ենք. բայց մտաբերեցէ՛ք դուք ով Գրիչ, այն ժամացոյցի ամենազգուշալի անցքը՝ որ գործեցիք Կոստանդնուպօլսում...կարծեմ չէ՛ք մոռացել այնպէ՞ս չէ:

Գրքերը ծախում ենք այո՛ աւելի տոկոսով. բայց ահա՛ պետք է՝ ի նկատի ունենալ և հետևեալ հաշիւը. որպէս օրինակ՝ դնում ենք մի 3ը. ձեզ ծանօթ Պ. Ստեփաննոս Պալասանեանցի ,,Քերականութիւնից՚՚ մենք գնել ենք 1874 թ. 8 օրինակ. 1 բուբլիով. որ մինչև այժմ մնում է անվաճառ 5 օր. տարեկան մի բուբլին՝ առևտրական յարաբերութեանց մէջ՝ ունէ տոկոս 10 կոպ. ահա՛ 4 տարի է որ մընում է. ուրեմն պետք է մի բուբլիո՞վ վաճառենք: Նոյն Պ. Ս. Պալասանեանցի „Քերականութիւն Մայրենի լեզուի՚՚ գրքից՝ գնել ենք 1874 թ. 5 օր. հատը 50 կոպ. որ մինչև օրս մնում է ամբողջութեամբ. որ նոյնպէս 4 տարի է, մի՛թէ նո՞յն գնով վաճառենք:

Դարձեալ Պ. Ս. Պալասանեանցի ,,Ֆրանսերէն Այբբենարանից'' գնել եմք 1865 թ. 20 օր. 34 կպվ. և ճան. ծախքն. մինչև օրս մնում է 14 օրինակ. տասներեք տարի մնալով, միթէ կարող ե՞նք նոյն գնով վաճառել: Դուք ինքներդ գիտէք Պ. Գրիչ, որ այս Ս. Պալասանեանցի գրքերը ո՛չ ով չէ գնում. մենք փողն տանք կանխիկ, Պ. Պալասանեանցն հարստանայ ու մենք ցնասուե՞նք.: թէ և առանց էն էլ որ ձրի էլ բաժանենք նորա գրքերը գնող չկայ. վերջապէս ես կարծում եմ, որ պետք է վերջը մեր խանութի աղբանոցի հարստութիւն դառնայ: Մենք 'ի նկատի ունելով վաճառականական այսպիսի ցնասներն, մի'թէ կարո՞ղ ենք միւս գրքերը ևս գնեալ գնով վաճառել. քանի՛ որ՝ կանխիկ դրամ ենք հատուցել և ո՛չ յանձնարարական պայմանաւ: Իսկ ա՛յն գրեանքը ընթերցանութեան, որոնք պատահմամբ յանձնարարութեա՛մբ են՝ մենք վաճառում ենք տըպեալ գնով: Այս բոլորից յետոյ հարկաւոր է և հասկանալ, որ վաճառման թուում լինում է և ապառիկք, որոնցից պատահում է որ և բոլորովին չէ ստացվում: Այժմ յուսով եմք որ զգոյշ շարժուիք ա՞յնպիսի հաշիւների մէջ՝ որոնք դեռ ձեզնից շա՜տ հեռու են:

Յետոյ յառա՛ջ է վազում տարօրինակ ցնորքանն Պ. Գրիչ հետևեալ ահռելի վայրահաճութեամբք,—գրելով՝ „Մի ուրիշ եկամուտի աղբիւր „մեր անխոնջ ազգասէրը շինել է իւր համար հայ„կական թատրոնը, որի ներկայացումներից գոյացած

„գումարը նա իւր մօտ է պահում, դերասաններին „հաւատացնելով թէ այդ փողերը ազգօգուտ նպա„տակի համար պիտի գործ դնէ: Բայց մի քանի սկեպ„տիկներ պնդումեն թէ այդ փողերով նա իւր խա„նութի թէյի մեքենաների ու կողպէկների թիւը „աւելացրեց՝ չար լեղուներին թէյ խմացնելու և „բերանները կողպելու համար:,, Ցեսնո՞ւմ էք սիրելի ընթերցողք, որ ինչ ազատ ճանապարհով է ընթանում:—Մենք խիստ ցաւում ենք Պ. Գրչի վերայ. որ նա իւր թեթևամտութեամբն և երեխայական երեւակայութեամբն այնքան է բարձրացել սնապարծութեամբ՝ մինչ զի, թուլացել է իւր բոլոր մարմնովը, յիմարացել է և տգիտացել՝ իւր տկար գաղափարով և եղել է ձեռնածու. ու սկսել է վերոյիշեալ վայրենի յիմարաբանութիւններ և դատարկաբանութիւններ գրել ,,Փորձի'' մէջ. որովհետև ո՛չ մի առողջամիտ անձն՝ երբէք առանց մի հիմնաւոր փաստերով, առանց հաստատ աղբիւրից տեղեկութեանց՝ չէր և չէ վստահանալ գրել այդպիսի լոբաբար վայրահաճութիւնքը... ըստ որում մենք վեց անգամ թատրոնական ներկայացումներ եմք տուել. և որոց ստացեալ եկամուտը՝ իւրեանց ժամանակներում հատցրել եմք ճշտութեամբք ուր հարկն էր: Իսկ այժմ, որպէս զի բոլորովին փակենք մեր ունեցած ծախուերկաթէ ծանրակշիռ կողպէքներովը՝ այդ ինքն իրեն կորցրած, շլացած և մոռացած Գրչի բերանը, և սանձահարելով բերենք կանգնացնենք այդ ձեռնածու հերոսին չափաւորութեան ազնիւ ճա-

նապարհի վերայ՝ ահա ներկայացնում եմ մեր ընդարձակ հաշիւը, հանդերձ հասուցեալ դրամովք՝ և ստացեալ ստորագրութեամբք: Բայց նախ և առաջ կարծեմ ցանկալի կլինի իմանալ մեր սիրելի ընթերցողաց, թէ ինչն է եղել մեր թատրոնասիրաց խումբ կազմելու նպատակը.—ահա համառօտ հայեացք: Ի 1868 թ. մի քանի երիտասարդք, որոց գլխաւորներն էին և պարագլուխ՝ Պ. Պ. Նահապետ Աթանասեանցն, Սիմէօն Փիլիպպոսեանցն, և այլն, վեհափառի թոյլտուութեամբ թատրոնական ընկերութիւն կազմեցին յօգուտ Ս. Գայեանեան Օրիորդաց դպրոցի. և սկսեցին տալ ներկայացումն 1869 թ. փետրուար ամսից սկսեալ: Ներկայացումներն ունեցան շատ յաջող եկամուտ, մինչև որ 8ն անգամ ներկայացմունքից ստացան եկամուտ մօտաւորապէս՝ 1300 բուբլի արծաթ. այս գումարից խնդ և անբաժդ Օրիորդաց դպրոցն ստացաւ միմիայն և եթ՝ երեսուն և չորս բուբլի. (34 ր): Այս անվայել վարմունքը հենց տեսնելով՝ իսկոյն մեր նուաստութիւնը բողոք ուղարկեց „Արարատ" ամսագրի խմբագրութեանը: Մեծարգոյ խմբագրութիւնը համաձայն իմ բողոքի՝ հաշիւ պահանջեց Ջերմեռանդ և ազգասէր ընկերութիւնից Կոնստանդնուպոլսի միջոցաւ (3). իսկ դոքա՝ փոխանակ փողերը ներկայացնելու, փառաւոր նորատեսակ աչքակապութեամբ՝ աւազ փչեցին նոցա աչքերը. և սկսեցին հրապա-

(3) Տես „Արարատի" բ. տ. թիւ Ը. Դեկտեմ. 1869 թ. երես 136, և 137:

բակաւ ասել, որ իբր „հազիւ թէ եկամուտը իւր ծախքն է ծածկում:„ իսկ ես պնդեցի, որ անշուշտ օգուտ կայ՝ և կլինի. և այս հիման վերայ՝ նոյն իսկ միջոցին ժողովեցի մի քանի բարեխիղճ երիտասարդներ և տուինք 7-ն յունվարի 1870 ամի. Ա. անգամ ներկայացումն՝ „Սէր կամ Մահ ողբերգութիւն 5 արարուածով՝ Պ. Բարխուդարեանցի, որի եկամուտը եղաւ ընդամենն . . . . . 68 բուբլի:

Լիմիածնական տպարանին տուինք ցայտարարութեանց և տոմսակաց վարձ 12 ր. „

Քաղաքական նուագածուին տուինք 10 ր. „

Թատրոնի աթոռներ բերել տանելու, մոմերի, և այլ մանր ծախքերի տուինք 14 ր. 4 կ.

ըստ մեր խոստմանք՝ 2 ուսուցիչարանաց, այն է՝ Թեմականին և Օրիորդաց՝ տուինք 50 ր.

Ահա մեր ունեցած հասատ ապահովագիրը:

„Ապահովագիր: Ստացայ ի Թատրոնական Երկրորդ „Ընկերութենէ ընդ ձեռն Պ. Աբգարու Գիւլամի„ բեանց զհասանելին յօգուտ Երկսեռ Դպրոցաց Հայոց „Երևանայ յիսուն բուբլի (50 ր.) զորոյ երեսուն „բուբլին առաքեցի № 5. ի Կոնսիստորն, իսկ զքսան „մանէթին № 6. առ Տեսչուհին Օրիորդաց Դպրոցին „Հայոց. զորմէ վասն ապահովութեան տամ զայս „Ապահովագիր—ի 13-ցունվարի 1870 ամի—փոխա„նորդ Թեմականին Երևանայ Մեսրոպը վարդապետ.„

Բոլոր գումարն է ծախուց՝ ուղիղ 86 ր. 4 կ.

Այս անգամ Ընկերութիւնը ինաս կրեց. դուրս գալով 68 բուբլին՝ . . . . . 18 ր. 4 կ.

Բ. անգամ ներկայացումն էր՝ 15-ն Ապրիլի 1870 ամի. „Արիստակէս“ փոխանակ Մեծին „Ներսիսի“, Ողբերգութիւն 4 արարուածով։ Եկամուտը եղև՝ ընդամենն . . . . . 57 ռուբլի։

Էջմիածնական տպարանին տուինք յայտարարութեանց և տոմսակաց վարձ . . . 5 ռ.

Քաղաքական նուագածուին տուինք 10 ռ.

Մոմերի, և այլ մանր ծախք եղև 12 ռ. 86 կ.

Երկսեռ Ուսումնարանաց տուինք օգուտ 30 ռ.

Բոլոր գումարն է ծախուց՝ ուղիղ . 57 ռ. 86 կ.

Այս անգամ ընկերութիւնը ևս վնաս կրեց, դուրս գալով 57 ռուբլին՝ . . . . . 86 կ.

Գ. անգամ ներկայացումն էր՝ 20-ն Մայիսի 1870 ամի. „Լևոն Առաջին“ ողբերգութիւն 5 արարուածով։ Եկամուտը եղաւ՝ ընդամենն . . . 66 ռ. 23 կ.

Էջմիածնական տպարանին տուինք յայտարարութեանց վարձ . . . . . 5 ռ.

Ջինուորաց Նուագածուին տուինք (քաղաքինը չկար) . . . . . 4 ռ. 50 կ.

Տփխիս հեռագիր ուղղեցինք, պ. Ստեփանէին, իւր այս ողբերգութիւնը ներկայացնելու թոյլտուութեան համար, տուինք . . . . . 2 ռ. „

Ներէր տուինք դերասան պ. Սահակ Ամիրիկեանցին . . . . . 3 ռ. 30 կ.

Մոմերի, և այլ զանազան ծախք եղաւ . . . . . 13 ռ. 42 կ.

Հ.Ս.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
U.S.S.R. Publicnaya Biblioteka
7/71. 1922
Ереванъ, Мясницкая
ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՏԱՆ

Տփխիսում եղեալ՝ „Մարիամեան“ օրիորդաց ուսումնարանին տուինք օգուտ 4 ռ. „

Երկսեռ դպրոցաց Հայոց Երևանայ տուինք յօգուտ . . . . . 30 ռ. „

Բոլոր գումարն է ծախուց՝ ուղիղ 62 ռ. 22 կ.

Այս մեր ունեցած հաստատ ապահովագրերը ապրիլի 17-ին և մայիսի 20-ին ներկայացումանց։ „Ստացայ ի պ. Աբգարու Գիւլամիրեանց և յերկրորդ „ընկերութենէ թատրոնի վասն երկուց ներկայացու„մանց վաթսուն ռուբլին. որոյ 30 ռուբլին պատրաստի դրամ, իսկ միւս 30 ռուբլւոյն „թատրոնական „պարագաւք մեր հաճութեամբ պատրաստեալ. որոյ „յուցակն կցեցաւ ընդ թատրոնական գործոյն փո„խանորդութեան մերոյ. որում տամ զստացագիրս „վասն ապագայ հաշուէտեսութեան. ի 20 մայիսի 1870 ամի. Յերևան Մեսրովբ վարդապետ Սմբատեանց։“

Այս մեր ունեցած հաստատ ապահովագիրը Տփխիսու „Մարիամեան“ ուսումնարանի։

„Պ. Աբգար Գուլամիրեանցից ստացա „Լևոնի“ „ներկայացման առիթով յօգուտ Մարիամեան ուսու„մնարանի թիֆլիսում չորս մանէթ. Ս. Ստեփանէ. Թիֆլիս 1870 յուլիսի 22։“

Այս անգամ բարեբաղդաբար ընկերութիւնը ստացաւ իւր կրած վնասներից՝ 4 ռուբլի 1 կոպ. ուրեմն մնաց ընկերութեան կրած վնասը 14 ռ. 89 կ.

Դ. անգամ ներկայացումն էր՝ 5-ն փետրվարի

1872 ամի, երկրորդ անգամ „Սէր կամ մահ“ ողբերգութիւն 5 արարուածով: Եկամուտը եղև ընդամենն 80 ր. 82 կոպ.

Քաղաքական նուագածուին տուին 10 ր.
Մոմերի, և մանր ծախքեր եղև . 11 ր. 64 կ.
Հոգևոր դպրոցին օգուտ տուին . 10 ր.
Օրիորդաց ուսումնարանին Երևանայ տուին . . . . . 34 ր. 29 կ.
Ընկերութիւնը ստացաւ իրեն կրած վնասը լնուին . . . . . 14 ր. 89 կ.
Բոլոր գումարն է ծախսուց՝ ուղիղ 80 ր. 82 կ.
Ահա մեր ունեցած հաստատ ապահովագրերը:

„Յօգուտ օրիորդաց դպրոցի ստացայ պ. Աբգար „Գուլամիրեանցից երեսուն և չորս մանէթ 29 կոպ. „Տեսչուհի Ս. Մագաթեանց. 10-ն փետրվարի 1872 ամի:“

„Ի հաշուարարական մասնէ կոնսիստորիայի հա„յոց Երևանայ վիճակի № 698, ի 29 ապրիլի 1872 „ամի, Յերևան: Ընկերութեան թատրոնական խաղար„կութեան Աբգարու Գուլամիրեանց Երևանցւոյ: Մա„տուցեալ ընդ յայտարարութեան ձերոյ ի 23 փե„տրվարի տասն ռուբլին յօգուտ հոգևոր դպրոցի „Երևանայ ի սոյն թիւ ընդ հրամանի կոնսիստորիայի „առաքեցաւ առ գանձապետն վասն ղրելոյ ի դպրո„ցապատկան տումարի ի մուտս, և կցելոյ ընդ նոյն„պիսի արդեանց: Զորմէ հաշուարարական մասն կոն-

„սիստորիայի տայ զիտել ձեզ: Անդամ կոնսիստորի „խահակ աւագ քահանայ: Ի տեղի ատենադպրի Ց. „Խաչատրեանց:“

—Այս ներկայացմանէն վերջացաւ ընկերութեան կրած վնասն:

Ե. անգամ ներկայացումն էր՝ 17-ն Մայիսի 1872 ամի. „Լեռն երկրորդ“ ողբերգութիւն 5 արարուածով: Եկամուտը եղև ուղիղ ընդամենն . . . . . 55 ր. 19 կ.
Քաղաքական նուագածուին տուին 10 ր. „
Մոմերի, և այլ մանր ծախսուց եղև . . . . . 11 ր. 23 կ.
Երկսեռ դպրոցաց յօգուտ տուին 30 ր. „
Բոլոր գումարն է ծախսուց՝ ուղիղ 51 ր. 23 կ.
Թատրոնի տեսարանաց համար չանկաներին, երկու թոմ շալաչերին, այլոց ատրոնների կոտրածներն կայնելուն, տուին բոլորը . . . . . 3 ր. „
Բոլոր գումարն է ծախսուց՝ ուղիղ 54 ր. 23 կ.
Ահա մեր ունեցած հաստատ ապահովագրերը:

„1872 ամի 17-ն մայիսի Յերևան „Լեռն“ Բ թա„տրոնի ներկայացման առիթով ստացայ յօգուտ ու„սումնարանիս օրիորդաց Ս. Գայիանէի քսան ռու„բլի արծ.“ Աբգար Գուլամիրեանցից: Տեսչուհի Ս. Մագաթեանց:“

„1872 թուի մայիսի 17-ին եղած Հայկական „թատրոնի ներկայացումից յօգուտ հոգևոր թեմա-

,,կան դպրոցի ստացայ պ. Գիւլամիրեանից տասն
,(10) մանէթ։ Տէսուչ Խորէն վարդապետ Ստեփանէ.
1872, յունիսի 21։''

Այս անգամ ընկերութիւնը ունեցաւ օգուտ
96 կոպ.

Զ. անգամ ներկայացումն էր՝ 21 ապրիլի 1874
թ. ,,Սենեքերիմ'' ողբերգութիւնն (համառօտն)։
Եկամուտն եղեւ՝ ընդամենն . . . 62 ր. 14 կ.
Քաղաքական նուագածուին տուինք 10 ր.
Մոմերի, մանր զանազան ծախքի տուինք 12 ր. 14 կ.
Թատրոնական արքայական մի դահ շինել
տուինք, և մի թաղ, միմիայն փայտը և զարդքը,
(իսկ աշխատանքը մեր աշխատութեամբ) եղեւ 11 ր. 97 կ.
Երկսեռ Դպրոցաց Հայոց յօգուտ տուինք 30 ր. ,,

Բոլոր դումարն է ծախուց՝ ուղիղ 64 ր. 11 կ.

Ահա մեր ունեցեալ ապահովագիրը.—
„1874 ամի—22-ն Ապրիլի Յերեւան. 21-ին Ապրիլի
,,այսր ամի ,,Սենեքերիմ ողբերգութեան ներկայացման
,,մասին յօգուտ Դպրոցի թեմական ստացայ Աբգար
,,Գուլամիրեանցից ուղիղ երեսուն բուբլի արծաթ
,,թղթադրամ (30 ր.) առ որ ստորագրեմ իսկական
,,ձեռամբ իմով. Հոգաբարձու Յակոբջան Գէորգեանց։,,

Այս անգամ ընկերութիւնը ՁԼԱՍ կրեց՝ դուրս գա-
լով եկամուտը 62 ր. 14 կ.—64 ր. 11 կպեց. 1 ր. 97 կ. ո-
րից դուրս գալով Մայիսի 17-ին 1872 թ. եղած օգուտը
96 կ. մնում է ընկերութեան վերայ ՁԼԱՍ 1 ր. 1 կ։
Այժմ տեսա՞ր Պ. Գրիչ. ամաչեցի՞ր..

Եւ այսպէս մեր վերջին ներկայացումն եղեւ
1874 ամի 21-ն Ապրիլի. և յետ այնորիկ ոչ մի ներ-
կայացում չենք տուել։

Ահա ներկայացնելով Ազգիս անաչառ դատաս-
տանին մեր թատրոնական գործունէութեանց ամ-
բողջ պարզ հաշիւը, և հասուցեալ կանխիկ օգուտ-
ները հանդերձ վաւերական իրաւագրերովք, որոնցից
երևեցաւ ահա ամենայն պարզութեամբ՝ որ 218
բուբլի 29 կոպէկ արծաթ կանխիկ գումար օգուտ
ենք հասցրել երկսեռ Դպրոցաց Հայոց։ Ուրեմն այս
բոլորից յետոյ այժմ ի՞նչ պիտի անէ Պ. Գրիչը...ի
հարկէ պիտի շուարի, ապաշաւի և պիտի զղջայ իւր վայ-
րենի ափեղցփեղ անսանձութեանցը, և վերջապէս վայ
տալով՝ իւր երկու ձեռքով պետք է վեր հատի իւր
գլխին, մինչև որ անմիջապէս վրայ հասնին իւր հա-
մախոհները և նստեն սուդ ի լաց, վերոյիշեալ՝ Պ.
Գրչի փթած գաղափարի երեխայական ցնդաբանու-
թեանց վերայ։ Եւ ահա, այսպէս դու Պ. Գրիչ! փա-
ռաց ի փառս խայտառակուեցիր ընդհանուրի առջև-
քո շամբշամբուութեամբդ և ամենաստոր մարդկու-
թեամբդ։ Ափսոս որ քեզ ինքդ վաճառելով՝ ծառայե-
ցիր մամոնայի և եղեր կամաւ սարուկ, ու բռնեցիր
Հրէական ընթացք, անձնատուր եղար դրամի, ու
սկսեցիր սորա, նորա զրուածքը ծամելով՝ փող ստա-
նալ. վայ քեզ, վայ քեզ մարդ, որ կորուցի՞ր զպատիւ՝
և եղե՞ր ,,խա՞խկ ու առակ ազգայոց,։ Երանի՞ էր
քեզ համար, և հազար երանի, որ ,,ՓՈՐՁԸ,,՝ ծնունդ
չառնէր. ըստ որում մինչդեռ չկար ,,ՓՈՐՁԸ'' դու-

ղանէ սպրումէիր քեզ համար գրականական գոռոզութեամբ. դու՝ Պ. Գրիչ, թարգմանեցիր օտար լեզուից զիրք, և սեփհականացրիր քո հեղինակութիւն... զոգաց ամբողջ երեսներով արտասահմանի հայկական հեղինակներից գրուածքներ՝ և հրատարակեցիր քո սեփհականութիւն...: Ահա այս տեսակ անուններին նոր ալ իմն քո գրականական աչքակապութիւններիցդ յետոյ՝ դու փքուեցիր, և որպէս հնդկահաւ՝ սկսեցիր ուռել և այդ բոլոր խարդախութիւններդ բանաստեղծաց Ադգիս՝ լաւ յայտնի եղաւ: Քեզ և քո զիրքդ, փառաւոր կերպով խայտառակեց Ս. ամսագրում պարոն Շ...ցին և իբր դու պատասխանեցիր „Սեղանի" մէջ իւր ժամանակին. բայց ինչ պատասխան. դու ի փախուստ էիր դիմում...: Բայց երբ լոյս աշխարհ երևեցաւ „ՓՈՐՁԸ", այդ լուսաւորութեան կրթարանը!! դու խսկոյն պարսկական խորամանկութեամբ օրացիր նորան, և նորա խմբագրին. որովհետև հարուստ մարդ էր, փող կար, փողի տոպրակը առաջ... և ահա այն օրից՝ դու բոլորովին կորցրիր քեզ, սկսեցիր փեղէ դանակով քերթել խեղճ գրականութեանը. որպէս հրէայն ամենայն նրբութեամբ զոլանոցով խարտյում է ոսկին և արծաթը՝ նոյնպէս և դու Պ. Գրիչ սկսել ես զիմակաւորուած խարտոցել խեղճ գրականութիւնը: Այս ես մեր գրականութեան ամենամեծ անբարոյութիւնն է, որ այդպիսի դատարկախօս, ձեռնածու և խմաստակ խելացիները՝ ճանկում

են գրականութիւնը՝ և շինում են կատարեալ գժանոց:

Սորանից յետոյ յառաջ է գալիս մեր ԺԹ. դարու ճոռոմաբանական ու զերբնական հրահանգիչը, և պերճաբան հռետորը՝ գրելով,—«Քննելով Պ. Գուլամիտրեանցի գործունէութեան այս ճիւղը, դաւելով «տեսնում ենք թէ մինչև որտեղ կարող է հասնել մի «մարդու յանդգնութիւնը այն հասարակութեան մէջ, «ուր ամէն (ամեն) խօսք հալած եղի տեղ է ընդունվում:» Պ. Գրիչ, միթէ դուք էք կամենում քննել մեր «գործունէութեան այս ճիւղը» (այդ մենք չղիտէինք) ողորմելի մարդ, խեղճ էակ, ցաւալի անգամ Ադգայինն գրականութեան, դու, ով գրիչ, նստիր քո սենեկում, մրօտիր թղթերդ՝ և ստացիր Պ. Ա. Յովհաննիսեանից ամեն մի երեսի համար գրամներդ. բայց այս բոլորի տեղ՝ դեռ մի լաւ հայեացք դարձրու, նախ քեզ վրայ՝ էրբև թէ, դու մի ուրիշ անձն ես. և քո բոլոր անցեալ օրերդ և բոլոր գործունէութիւններդ քննելուց յետոյ՝ (ի հարկէ չես մոռանալ և Պ. Պօլսոյ մէջ գործունէութեանդ գերահրաշ սարդերը և ընթացքը) հասիր սա ներկայն. ու յետոյ՝ իմ, յայտնի հակառակորդների (որոնք բարեբաղդաբար գանվում են յանձին յարակցութեամբ „Փորձի" խմբագրի գրադարանում, նոյն և ձեզ մօտ) բանաձ գործերի վերայ մի խոր քննութիւն արա. և եթէ չզիտես՝ ահա յայտնապէս ցուցանում ենք, որ կարող էք կարդալ Ս. Էջմիածնայ „Արարատ" ամսագրերի մէջ, սկսեալ՝ 1869 թ.

ա. տարի 172 և 173 երեսքը (4) 1869 թ. բ. տ. 136 և 137 եր. և 253—254 եր. և 1870 թ. դ. տ. 68, 69, 70 և 71 երեսքը, որոնց դէմ մեր նուաստութիւնը՝ ամենայն ճշմարտութեամբ և հաստատութեամբ՝ հանդէս է դուրս բերել դոցա կատարեալ խայտառակութիւնքը և նորատեսակ աչքակապութիւնքը: Ամենայն մեր յարգելի ընթերցողաց՝ խնդրում ենք որ ի պատիւ ազգիս՝ ինչպէս ազգի մտածող անդամք՝ բարեհաճեն վերոյիշեալ „Արարատայ“ համարները որ ցոյց ենք տալիս՝ ընթերցասիրել կարդալ. որով յոյժ հետաքրքրական տեղեկութեանց հաղորդ կլինին. նա մանաւանդ՝ այս դէպքում:

Դուք ո՞ Գրիչ, ի՞նչ էք կորցրել և ի՞նչ էք մտնդալիս: Ո՞րպէս քննեցիք մեր „գործունէութեան այս ճիւղը“ յարգելի Գրիչ! (ո՞ Գրիչը երազի մէջ է, և փնդռում է Էֆէմերտէ): Եւ այնպէս ասել, խօսել, հայհոյել առանց որ և իցէ մի հաստատութեան՝ դուրս դալ քաղաքավարութեան ճանապարհից, հեռանալ խղճմտանքի սուրբ զգացողութիւնից և ոչնչացնել նորան՝ թէ որչափ աններելի է՝ թողում եմ դատել ամենայն անկեղծութեամբ ազգիս արդարադատ ընթերցողաց: Այդպէս են ընթանում, ամեն բարբարոս ռամիկները. ինչան ազգիս զրականական ապաբաղդութեան՝ այժմ տեսնում ենք այդ ռամկական զզուելի սովորութիւնքը մատենախօ-

(4) Տես և „Մեղու Հայաստանի“ 1869 թ. № 20 յէջ՝ 155:

սական բէմում: և երևակայիր ով Հայ ընթերցող, որ այդ բոլորը կատարվում է օ՛րը ցերեկով եռամեայ „ՓՈՐՁ“ Հանդիսի մէջ, խմբագրութեամբ՝ Աբգարու Յովհաննիսեան. որ յօդուածի սկզբից մինչև վերջը՝ լի է ամենատեսակ հայհոյանքով և մեր ատելի ածականներով. այն պախարակելի գծուծ ածականներով՝ որոց մենք ատել ենք՝ և ատում ենք. այս խօսքերս պնդելով կհաստատեն նոքա՝ որոնք մեզ անձամբ անձին գիտեն:

Դիմակաւոր Պ. Գրիչը՝ ձեռքը ճակատին դրած՝ մեր Հրատարակութիւնքը քրքրելուց յետոյ երբ տեսնում է որ չէ կարողանում գտնել որ և իցէ մի մասն որով քննութեամբ պատերազմէր մեզ հետ, և վերջապէս սրտի զայրոյթը և մելամաղձը թափելով բացականչում է, „թէ մինչև ո՞րտեղ կարող է հասնել մի մարդու յանդգնութիւնը„. ո՛հ, ի՞նչ քննիչ, ի՞նչ հմտաւոր kritike, բաղդաւորուի՞ր Հայոց գրականութեան խեղճ դանձարան, որ այսպէս խառնիճաղանչ, եսական և բռնաւորական՝ դատարկախօս քննիչներ են ծնվում քո մէջ: Յա՛մ է և ժամանակ, ով Հայկազեան տեղերեալ Մատենադարան, որ աւելի ևս հարստացնես հնութեան թանդարանդ, վասն զի, արդէն քո հարաստ՝ զաւակներից Լանկթամուրական յարձակմունքներ են յառաջ դալիս ԺԹ-երորդ դարումս:

Արդ՝ պատասխանում ենք ով շուարեալ ժահակիր Գրիչ, որովհետև մեր գործերը ամրացած են սալ Որձաքարերի մէջ. իրենց սրբութեամբ և պիտա-

նաւորութեամբ. ուստի և „յանդգնութիւնը„ հաստատել է մեզ այնտեղ՝ որ արժանացած են մեր հրատարակութիւնքը Եւրոպայի Հայագէտ գերդոն ուսուցչապետաց (professeur) խորին և քաղցր համակրական ընդունելութեանց. որք բարեհաճել են յայտնել մեզ, իւրեանց ուշադրութեան արժանի գովեցիկ նամակներով շնորհակալեաց հաւաստիքքը: Այո՛ տեսնում եմ ակն յանդգնման, որ բարեբաղդաբար պիտի ցուցէք, տուչորութիւք և մորմոքութիւք ձեր բոլոր խմբով հանդերձ, տեսնելով՝ մեր հրատարակութեանց գովելի ընդունելութեամբքը տարածուիլը բոլոր դասակարգի մէջ:

Ցիծաղելի է և այն՝ որ ասում էք, „այն հասարակութեան մէջ, ուր ամէն (ամեն) խօսք (գիրք, գրուածք) հաւած եղի տեղ է ընդունվում:“ Որպէս բոլոր մասում, նոյնպէս և սոսա՝ շատ և չափազանց սխալվում էք ով Գրիչ, վասն զի, նախ՝ մեր հասարակութիւնը եթէ այդպէս լինէր՝ մենք յիրաւի մի կողմից բաղդաւոր կլինէինք, ուստի և անմահն տոքթոր Մանուէլ Բ. Իւթիւճեան՝ չէր ողբալ ասելով՝ „Մանուէլն ոչ թող ըսէ թէ 1,000,000 „Հայեր մէկ Ամերիկացւոյ մը չափ ալ չեն կարդար.. (5)“: Ահա այսպէս էր ողբում հոչակաւորն զաղղիացի Լաբուլէյ իւր հայրենակիցների համար ասելով՝ „մէկ ամերիկացի տարս զաղղիացւոց կարդացածէն „աւելի կը կարդայ:“ Իսկ մենք, չէինք ասիլ թէ՝

(5) Տես „Կիլիկիա“ Հանդիսի Հ. Ա. 1867 թ. յուլիս. թիւ 1. յէջ 27:

„Հայաստանի կեդրոնի մէջ անդամ, համարեա թէ, բոլորը զուրկ են կարդալուց, 1000 հայի մէջ հա„զիւ գտնես 50 մարդ, որ ճանաչեն գոնէ, թէ ինչի՞ „համար եկած են աշխարհ, ի՞նչ է Հայը, ո՞վ է „եղել նորա Ազգասոհմը, ունեցե՞լ են արդեօք մի „փիլիսոփութիւն, ունեցե՞լ են կարգ ու կանոն.. ի՞նչ „կրօն են ունեցել նոքա, ո՞վք են եղել նոցա լուսա„ւորիչքը, ունի՞ն ազգային պատմութիւն—ինչի՞ „համար է արդեօք ազգի պատմութիւնը... ամա... և „վերջապէս ինչի՞ համար է պատկիլ—ի՞նչ սրբաս„կանութիւն ունի կինը և այն և այն:“ (6) Սրկրորդ՝ մեր հասարակութիւնը երբէք „ամէն (ամեն) խօսք (գիրք, գրուածք) հաւած եղի տեղ“ չէ ընդունում, որովհետև յիմար չէ որպէս կարծում է ձերդ ժահակրութիւնը. այլ՝ նա (հասարակութիւնը) խելօք է. նա գնահատում է ամեն բան, և այնպէս է ընդունում.. ով Գրիչ, այս խրատը լաւ մտքումդ պահիր որ այն բանին, որին խելքդ չէ հասնում՝ և գլխիդ հետու է՝ մի՛ խօսիլ և մի՛ մտնար նորան:

Յետոյ շարունակում է ճարպիկութեամբ. „Մարդու խելքը չէ հասնում թէ ինչպէս մի մարդ, „առանց ոչինչ պատրաստութեան, առանց գիտու„թեան այրուբենը ճանաչելու, կարողացել է կա„ցել մի ամբողջ հասարակութեան աչքը, միշտ

(6) Տես „Դատիթ բէգի“ մեր յառաջաբանի Ի. երեսը:

,,խօսելով այնպիսի առարկաների վրայ որոնց վրայ
,,ոչինչ գաղափար չունի, անկապ, անիմաստ մտքեր
,,յայտնելով, անձնական շահերը հասարակաց շա-
,,հերի վարագուրի տակ ծածկելով, կեղծ հայրենա-
,,սիրութեամբ, սուտ ազգասիրութեամբ ոգևորե-
,,լով...'' Պատասխանում եմ, ի հարկէ պ. Գրիչ, որ
ձեզ նման ,,մարդու խելքը'' ո՞ւր պիտի կարողանար՝
և ո՞ւր կրկարողանայ մեր բոլոր պարզ և պիտա-
նի մտքերին հասնել. եթէ Մասիսը և Կազբեկը
կհասնեն միմեանց՝ այնպէս և դո՛ւք, հանդերձ ձեր
շրջապատեալ եսականներով՝ կարող էք հասնել մեր
պարզ և անբիծ գործունէութեանց. վասն զի ձեր
,,խելքը'' թագաւորուած է եսականութեամբ. և
ուր կայ եսականութիւն՝ անդ կայ բռնութիւն. ուր
կայ բռնութիւն՝ այնտեղ կայ վայրենութիւն: Զար-
մանում ենք, որ ի՞նչպէս յանդուգն համարձակու-
թեամբ և վերին ատիճանի վստահութեամբ անա-
մոթաբար ասում է, ,,անպատրաստ և առանց գի-
տութեան այբուբենը ճանաչելու,, ով փառամոլ Գրիչ,
չէ՞ թէ մեր գրքերը ձեր առաջին էր. ո՞րն էր դո-
ցա մէջ մեր ,,անպատրաստութիւնը'' ո՞րն էր
մեր ,,անգիտակցութիւնը'' որ հանդիսանում էք մի
յաւելաբան էակ. առանց որ և է՝ մի գօրաւոր
պատճառի. միայն թէ՝ լսուէին և մրսուէին թղ-
թերը, և տեղ բռնէին ,,ՓՈՐՁԻ'' մէջ, ,,ՓՈՐՁԸ''
հաստատեար՝ և քո աշխատանաց վարձդ թա-
փուէր գրպանդ. ազգասիրութիւն, հայրենասիրու-
թիւն ահա՛ տես ո՞րտեղ է երևում: Այո՛ պ.

Գրիչ, մեր գ՝օրաւոր գործունէութիւնքը, և պի-
տանացու հրատարակութիւնքը՝ ա՞յնպէս վատ-
թար և պինդ կապել են ձեր աչքերը՝ որ
բոլորովին չեն բացվում. որոյ մասին ճարահա-
տեալ ձեռքներդ դրած ծոցդ՝ յընթացս 13 ա-
մաց՝ բացականչում էք օգնութի՛ւն... Իսկ
հասարակութեան աչքերը՝ միշտ բա՛ց է՝ և
բաց են եղել ողորմելի դուք ի ք՝ուր էք ամ-
բողջ հասարակութեանը ձեզ ընկերացնում: Իրա-
ւամբ էր Հայկական հասարակութիւնը՝ մեզ ճա-
նաչել է ի վաղուց անտի. երբ դեռ, ձեր աչ-
քերը կապել չէր մեր գործունէութիւնքը:

Յետ այսորիկ երևան է գալիս մթթացեալ Պ.
Գրիչը, մի նորաստեղծ մանկական տգէտ փիլիսոփա-
յութեամբ որ գրում է թէ՝ ,,միշտ խօսելով այն-
պիսի առարկաների վրայ որոնց վրայ ոչինչ գաղա-
փար չունի,, Զարմանում ենք մեր Պարոնի անաստ-
միկական քանքարի վերայ, ըստ որում Պ. Գրիչը այն-
քան չէ մտածում որ եթէ խօսում ենք՝ ուրեմն
ունենք գաղափար. ապա եթէ կայ գաղափար՝
կայ ուրեմն և մտածմունք. իսկ եթէ կայ մտած-
մունք՝ ուրեմն կայ և խօսք...: Մի՞թէ այնքան կորց-
րել էք ձեզ Պ. Գրիչ որ չէ՞ք կարողանում հասկա-
նալ՝ որ մարդս խօսում է գաղափարի, մտքի,
ուղեղի թելադրութեան համաձայն. մարդոյս լե-
զուն՝ որով խօսում է, ձեռքերը՝ որով գործում են,
ոտքերը՝ որով գնում են և այս բոլորը՝ են
ամենախոնարհ ծառայ և հլու հրամանակա-

տար՝ մտքի, դաղափարի և ուղղղի արտայայտութեան. ուրեմն մեր այս քննութիւնից երևեցաւ՝ որ ձեր այդ երևելի թեթևամտութեամբ գրուածքը, ոչ այլ ինչ են՝ եթէ ոչ՝ անմտութիւնք և յիմարաբանութիւնք. և այն, յոյժ ցաւալի է տեսնել ,,ՓՈՐՁԻ'' մէջ, այդպիսի ամենախակ և ալանի գրուածքը, որ երբէք պատիւ չէ բերում նորա խմբագրին և հրատարակչին: Պեռք է այդ վեհմ պաշտօնատէրերը, լաւ ընտրութիւններ անեն. և թոյլ չտան երբէք մտնել իրենց շրջանը այդպիսի իմաստակ և խառնիճաղանջ գրուածոց, որպէս է Պ. Գրչինը, որովհետև մեզ հարկաւոր են գործ, քննութիւն անաչառապէս, և իրականութիւն, և ոչ թէ յաւելաբան վայրահաճութիւնք:

Հարցնում ենք, ո՞րն է մեր ,,անկապ և անխմաստ մտքերը,, ինչի՞ չէք ապացուցանում եթէ կա՞ն. մենք աւելի ևս շնորհակալ կլինէինք, որ և ձեր իսկ պարտքն էր. ինչո՞ւ էք խոյս տալով փախչում ո՛վ ճանճանչափայլ արև: Ո՞ր ,,անճնական շահերը հասարակաց շահերի վարագուրի տակ ծածկեցինք,, այս խօսքերը խիստ ծանր են և աններելի. չգիտեմ ի՞նչպէս էք իրաւունք տալիս ձեզ անպատկառ դիմաք առանց մի ապացուցութեան՝ զրպարտութիւն անելով զրելը անխնայ մեր յանդուգն խօսքերը, որ ո՛չ մի առողջամիտ մարդ՝ թոյլ չէր տալ իրեն այդպիսի սանձարձակ ճնոտպարհով ընթանալ, ամեն

բան աշխարհիս մէջ ունի իւր չափն՝ ու սահմանը. բայց Պ. Գրիչը, դուրս է եկել չափից ու սահմանից և եղել է մի տարօրինակ էակ: Եւ այսպէս Յ. Թերզոյդ դարու մէջ՝ այդ ,,ՓՈՐՁԻ'' աշխատակից վարձկան Պ. Գրիչը երևելայական ցընորմունքի մէջ խորասուզուելով՝ կորցրեց և աղաւաղեց քննութեան բարձր արժանաւորութիւնները և ազնիւ կողմերը:

Ո՞ր մեր գրուածոց մէջ գտաք, երբ մեզ սեփհականացրած՝ ,,ազգասէր և հայրենասէր'' ամենաբարձր ածական բառերը որ գրում է. այդչափ ահռելի դաժանութիւն. չգիտեմ, դուք մի՞թէ օրը ցերեկով երազի մէջ էք. այն ինչ՝ ամբողջ ապարանքը, աշխատում են և գործում: Մենք խորհուրդ ենք տալիս Պ. Գրչին՝ որ նա այսուհետև միմիայն պարապի իւր պաշտօնով և ոչ թէ Մատենախօսական վեհմ և պանծալի գործի մէջ մտնել. որ բոլորովին խա՛կ է, ուրեմն՝ և հեռու է նորա այդ աստիճան հասկացողութիւնից:

Յետոյ ասում է, ,,ես այսպիսի անօրինակ ,,յանդգնութիւն, ասում ենք, կարողացաւ մինչև ,,այժմ անպատիժ մնալ մի հասարակութեան մէջ ,,ուր հրապարակական դատաստան կայ, ուր կայ ,,մի մամուլ՝ որի պարտաւորութիւնն է ամէն (՞) ,,(ամեն) մի չարիք, ամէն (ամեն) մի ախտ հրա-

(՞) Ընթերցող պատուական ամբոխը՝ տեսնում է ահա՛ ակն յանդիման որ Պ. Գրիչը, դեռ մինչև

,,պարակ հանել և հարուածել։,, Քեզ եմ յանձնում, քեզ խոհեմ Հայ ընթերցող, դատելն ու կշռելն. որ մեր կարծեցեալ բանիմաց՝ բայց վարձկան էակ Պ. Գրիչն՝ ինչ Ասիական բռնակալ խաների, փաշաների և բաշիբոզուկների նման չափազանցութեանց մէջ է մտնում։ Նայիր այդ ափեղցիեղ երևակայական շահամոլ գրուածքին։ Ի՞նչ է կամենում անել... Երևի Պ. Գրիչը էլեքտրական զօրութեամբ կամենում է համբառնալ երկինքը, որ այնտեղից իւր հետ վայր իջացնէ Գիտաւոր աստղին Տիխիսու հրապարակը. ուր պատրաստ

օրս մինչ անգամ՝ տառասխալական խակութեան և անհասկացողութեան մէջ է զտնվում։ Նա գրում է ,,ամեն,, բառը՝ ,,է,,ով որ բոլորովին հակառակ է խակութեանն. զուցէ նա ցոյց տայ մեզ Մխիթարեանցների բառարանը. բայց մենք, պնդում ենք և հաստատում՝ որ այն ևս սխալ է. վասն զի, ,,ամէն,, բառը՝ Եբրայական բառ է, ուստի և բոլոր ազգերը նոյնութեամբ հետևաբար ընդունել են „ամէն,,ը որ նշանակում է՝ այո՛, ճշմարիտ, իրաւ, և այլն։ Իսկ Հայկական ,,ամեն,,ը՝ որ գրում ենք «ե»ով դա՝ ,,ամենայն,, բառի ճիշտ արմատն է, որի նշանակութիւնը խիստ պարզ է։ Այսպիսի սխալները, ի հարկէ ամենամեծ ամօթ է գրականութեան մէջ հրապարակ իջնողին, առաւել ևս՝ Մատենախօս անձնի։ Այսպիսի վարձկանաց՝ հարկաւոր է զգուշացնել և բերել ճանապարհի վերայ, որպէս զի իրենց ճանկերովը՝ չաստոտեն մեր մաքուր գրականութիւնը։

կլինին անմիջապէս՝ իւր համախոհների ամբողջ խումբը. որ իսկոյն Գիտաւոր աստղին կհրամայի Պ. Գրիչը՝ որ լուսափայլութեամբ շրջապատէ իւրեանց. ահա՛ այնտեղ կսկսի Պ. Գրիչը իւր ահռելի և սարսափելի Մատենախօսութիւնը, որ աշխարհքը կդողդոյ, մարդիկ կշլոթուին, և երկրագունտը կշարժի. ձա՛յն, աղաղա՛կ, գոչի՛ւն, որոտո՛ւմն և շունչին՝ կթնդացնէ երկիրը...։ Այո՛ սպասում էր Հայոց ազգը, որ այս բոլորից յետոյ՝ դուրս գաք ,,ՓՈՐՁ,, եռամսեայ Հանդէսը, և կառուցանէք նորա Խմբագիր և Հրատարակիչ պ. Արզար Յովհաննիսեանն Հրապարակական Դատաստան,, (սարսափելի ժամանակ) նստէր Գիտաւոր պ. Գրիչը, դարսէին Ինկվիզիցիայի կանոնագրքերը և ամենայն փառաւորութեամբ ծածանուէր Նորին Դրօշակը. Գրիչը դառնար Տօրկվեմադը և սկսուէր տասնուհինգերորդ դարու զարհուրելի և սարսափելի գործողութեամբ դատաստանը. և ժա՛մ կլինէր արդէն, քարտուղարութեան պաշտօններ շնորհել մեր հակառակորդաց։ Ցաւում ենք որ պ. Գրիչը՝ նոյն և ,,ՓՈՐՁԻ,, Խմբագիրը՝ չեն ծնուել Ռաւմէր նախապարի ժամանակը, որ դպրոցների վերայ շղթայք դրուեց. ինչ մեծ դեր կը կատարէին սոքա այն ժամանակը ով Հայեր... վասն զի այժմ այս լուսաւոր դարումն կամենում են մտցնել այդ գիտնական ճառագայթները՝ այն հին բռնակալական հնարքները, որոնք՝ Անդղիայի թագաւոր Ռիքարդոս Երկրորդի միջոցումն, իւր տէրութեան պայազատ ցե-

ղերը՝ խնդիրներ ներկայացրին արքային պնդելով՝ թէ „բոլոր հասարակ դասը թող երբէք իրաւունք չունենայ իրենց մանուկները դպրոց ուղարկել...“ Այժմ իմացա՞ր սիրելի ընթերցող դոցա գաղտնի խորամանկութիւնները և խորխորատ վերապները ազգային դրականութեան...:

Պ. Գրիչ, բա՛ց մոացդ աչքը՝ և տես, որ մեր „Գաւիթ Բէգի“ բաժանորդագրիները 60 կոպ. չէր որպէս հաշուում էք. այլ 50 կոպ. այժմեան գինն է միայն 60 կոպ. և այս հաշուով սուտ աւելացրած էք գումարումն 48 ր. 60 կոպ: Տպագրութիւնը եղել է ծախսով՝ ո՛չ թէ „150—180 բուբլի.„ այլ ուղիղ 375 (երեք հարիւր եօթանասուն և հինգ բուբլի) ըստ Հաշուեցուցակի Տպարանական ժողովոյ Ս. Էջմիածնի որ և ի յ8-էն ի 10-էն Մայիսի 1871 ամի: Ահա թէ որքան դուք ենթակայ էք եղած կրիցս և նախանձից՝ դոքա հաստատ երևում են նորանով՝ որ դուք սատանայութեանց մէջ շաղախուած էք. (այս էս քաջութիւն է): թէ և այս մասին բոլորովին աւելորդ էր անգամ մի բան էս գրելու ձեր քանքարի մինչև այդ ասպիճանի դեռահասութեան դէմ: ըստ որում մենք, մեր գրքի թէ յայտարարութեան՝ և թէ նոյն իսկ գրքի մէջ՝ չենք գրել երբէք „թէ դորա օգուտը՝ այս ինչ տեղ ենք նուիրում„ ուրեմն և հարկաւ՝ խօսքի տեղ էս չկար ձեզ մտնելու մեր դրամական, թէ օգտի և թէ վնասի մէջ. մենք բացարձակ առաջարկել ենք յայտարարութիւնը, ով կամեցել է՝ ստորագրուել է,

իսկ ով չէ ցանկացել՝ գրքը էս չէ ստացել: Դիցուք թէ՝ մենք աշխատած լինէինք այդ գրքից 1000 բուբլի, էհ ձեզ ինչ, կամ ո՞ւմ ինչ. կամ եթէ տէր մի արասցէ վնաս արած լինէինք, էհ ո՞վ պիտի տար մեր վնասն, ի հարկէ ոչ ոք. չլինի՞ թէ պ. Գրիչ, դուք պետք է վճարէիք ձեր վարձկանութեամբ ստացեալ դրամներից... բայց գիտէք, որ մենք այդպիսի դրամների վրայ՝ կթաքէինք, որովհետև մեր ճանապարհը սուրբ է: Ես այսպէս դուք երբէք, և ոչ մի բոպէ և ոչ մի ժամանակ իրաւունք չունէք՝ և չունէք յայտմ մասին անդամ բերան բանալու. ո՛ւր մնայ խօսելու: Այլ՝ թէ դուք, և թէ ով և կամենար կարող էր հանգէս դուրս գալ անաչառ քննութեամբք միմիայն և եթ՝ գրուածքի վերայ. ցոյց տալով (եթէ կգտներ հայրենասիրութիւն ձեր՝ կամ ձեղապիսի մի ազգասէր անձն,) մեր սխալները. էս և գրուածոց մէջ պիտանաւորութիւնները (կամ եթէ կային՝) և անյարմարները. և ո՛չ թէ թողնել՝ իրականութիւնը, գործը, և գործողութիւնը. ու խօսել թեթեամտութեամբք և անդիտակցութեամբք այն բաների վերայ՝ որք յարմար են միմիայն պատրաստական դասատան աշակերտի (приготовительный) և հետևապէս ի հարկէ, որք հեռո՛ւ են բոլորովին գրաքննական կանոնից: „Հասկացողին մէկ՝ չհասկացողին հազար“. ասում է առածը:

Պ. Գրիչ դուք մեր ամեն բանը՝ յիրաւի ընդհակառակն էք հասկանում. վասն զի, „Էջմիածնին

կամ Պղնձէ քաղաքի պատմութիւնը" դուք պէտք է տպէք „Փորձ"ի մէջ. Ուսումնական բաժնում. և չէ թէ մենք. այդ բոլորովին հեռու է մեր դաղափարից: Բայց որովհետև արդէն 13 տարի է, որ մեր պիտանացու գործունէութիւնքը ձեր աչքերը կապել են, որոյ առթիւ՝ դուք ընկղմուել էք Բաբելոնեան շփոթութեանց՝ և տարտարոսական երաղների մէջ, ապդ՝ պատհանջ կար և կայ՝ ձեր ցանկութեանը, որ „Էֆիմերաէն" և „Պղնձէ քաղաքի պատմութիւնը" անշուշտ տպագրէք. և այսպէս դուք ի տի մոռնենալով „Էֆիմերաի" տպագրութիւնը անցեալ տարի, երբ դուրս եկաւ պ. Ա. Էնֆիաճեանցի Օրացոյցը՝ իսկոյն զնեցիք նորանից. որովհետև այնտեղ էր „Հարուստ Երաշխանը": Բայց տարաբաղդաբար այս տարի դուրս չեկաւ նորա Օրացոյցը. ուր պէտք է լիներ՝ „Վիճակարան հարուստ և դեղցիկ" և որից ի հարկէ փութով կգնէիք. որով ձեր Մատենախօսութեանց համար վիճակներ բանայիք:

Պ. Գրի՛չ երբ դուք դեռ կարողութիւն չունէք, մի տպագրուած գրքից բառ կամ մի նախադասութիւն արտագրել՝ ասացէք խնդրեմ ի՞նչպէս էք վատահանում քննել... ըստ որում „Դաւիթ Բէգի" 108 երեսում մենք գրել ենք „մատդով" իսկ դո՛ւք գրել էք „ՓՈՐՁԻ" 345 եր. 22 տողումն „մատդով". մենք գրել ենք նստրով, իսկ դուք հասարակով: Նոյն երեսի 25 տող. գրել էք „մեզանից„ որ մենք գրել ենք „մեզնից„ և 346 եր.

7 տող. գրել էք „յորինուածովք„ բայց մենք գրել ենք „յօրինուածովք": Սոքա՝ աննշանելի են գրաքննական և Մատենախօսական գործերում. և ով չունի այնքան խելահասութիւն՝ անհրաժեշտ է փառաւորութեամբ վայր իջնել գրականական Ամբիոնից:

Մենք գրել ենք „Դաւիթ Բէգի" 113 եր. „հեռացնելով միանգամայն մեղնից նախանձը և ատելութիւնը„ Պ. Գրիչը մեր այս գրուածքին ասում է „(հին երդ)„ և այսպէս չհաւանելով հնութեանը՝ կամենում է ասել հրապարակաւ՝ որ մոռացնենք մեզ՝ չարութիւնը, նախանձը և ատելութիւնը՝ որ է՝ (նոր երդ)

Յետոյ ասում է Պ. Գրիչը. „Հրատարակիչ բառի վերայ խմբագիր բառն էլ կրպցընելու հաճոյքը ունեցա„. Զղիտեմ հասկանո՞ւմ էք դուք Պ. Գրիչ, իսկ եթէ ոչ՝—հասկացէք, որ այլ է „Հրատարակիչն„ և այլ է „խմբագրիչն" զոքա առանձին առանձին պաշտօնական բառեր են. այնպէս որ մէկը խմբագրում է՝ իսկ միւսը հրատարակում. ինչպէս Ռուսացը Редакторъ и Издатель, ահա ինչպէս „Մեղու Հայաստանի" Պ. Սիմէօնեանցն խմբագրում է, իսկ պ. Հ. Էնֆիաճեանցն հրատարակում: Իսկ եթէ այդ երկու պաշտօնները կատարում է մի մարդ՝ յայնժամ գրում է ի միասին „խմբագիր և հրատարակիչ" ինչպէս և ձեր „Փորձի" տէրը պ. Ա. Յովհաննիսեանը և այլն:

Եթէ բարձրանում էիք դուք „Մատենախօսութեան" ամբիոնի վերայ՝ ով վարձկան Գրիչ, ուրեմն

պէտք է նախ և առաջ կշռել տայիք ձեր հասկացողութեան քանքարը. և իմանայիք նորա թուլութիւնը, որ այսպէս խակութեամբ և խայտառակութեամբ՝ ձեզ չմրօտէիք:

Սորանից յետոյ դրում էք, „Մենք երկար չենք „կանգնիլ մեր աղգասէրի գործունէութեան այս ճիւ„ղի վրայ. (իբրև թէ միւս ճիւղերումը մեծ բան արիք, ոչ ովի բան չասէք) ամէն (ամեն) մարդ „գիտէ որ օրացոյց կազմելու (խմբագրելու) համար „մեծ խելք հարկաւոր չէ: Յետոյն գրագէտը, որ հա„զիւ գրիչ բռնել կարող է, չէր դժուարանալ այսոպ„սի մի մեքենայական աշխատանք յաջողութեամբ „գլուխ տանելու“ Այժմ պատասխանում ենք, ի հար՝ կէ չէք կարող կանգնիլ այս ճիւղի վերայ, որովհետև այս ճիւղը (քննութիւնը) Ախէթի գինին չէր՝ որ վերցնէիք ու միանգամից կուլ տայիք. այդտեղ պահանջում է ամենանուրբ գաղափարի միտք և խորհասկացողութեան ըմբռնումն, որից՝ դժբաղդաբար դուք զրկուած էք, և այս հիման վերայ՝ որպէս տաձիկը փախչում է խոզի մոից, մարդս իւր թշնամուց՝ Գրիգորոնեանց Բաշի-Բոզուկից՝ և վերջապէս հիւանդը իւր հոգէառ հրեշտակից՝ նոյնպէս և դուք ո՛վ վարձկան գրիչ, փախչում էք մեր օրացոյցի քննութիւնից. և այս առիթով՝ սկսեցիք խաբել „Փարձ“ի ընթերցողներին. որ Օրացոյց խմբագրել՝ պնդում էք կարող է ամենայեւտին գրագէտը. եթէ այդպէս հեշտ էք կարծում՝ դուք ոչ Գրիչ կարծում եմ որ մի երկու

գրագրի չափ գիտութիւն ունիք. բայց ինչու չկարողացաք իմանալ թէ մեր Օրացոյցների մէջ կա՞ն զանազանութիւնք. և թէ իմ խմբագրեալ Օրացոյցի մէջ կա՞ն սխալներ, և կամ որո՞նք են. և կամ թէ միւս չորս Օրացոյցների սխալները, որ մենք խայտառակութեամբ դուրս ենք բերել, ուղի՞ղ են արդեօք, թէ ոչ՝ ապա քննիր ու հաստատիր ով ձեռնածու վարձկան Գրիչ, զուցէ մենք սխալուած ենք... այն ինչ՝ նոցանից երեքը՝ խմբագրում են արդէն 10—15 տարի, և հարկաւ բոլորովին ընտելացած պիտի համարուէին իւրեանց գործի մէջ, որ դուրս եկաւ ընդհակառակը...: Բայց մե՛նք, որ ընդամենը երկու տարի է, որ սկսել էինք՝ նոցա թերութիւնքը և ընդդէմ Կանոնի Ս. Եկեղեցւոյ արարքը փառաւորութեամբ երևան հանեցինք...: Դեռ մինչև օրս Պօլսոյ մէջ եղած Օրացոյցների մէջ ևս պատահում են սխալներ: Եւ այս բոլո՛րը դուք շամբշամիտ Գրիչ, համարում էք „յետին գրագէտի գործ“ տգիտութիւն մտաց, ծիծաղելի՛ մարդ...: Մտաբերեցէ՛ք ով վարձկան գրիչ 1876 թ. (եթէ յիշողութիւն ունէք) որ Տփխիսում պ. Զանցեվն մի календарь (Օրացոյց) խմբագրեց և հրատարակեց, բայց ո՞րպէս, ահա՛ խնդիր. այնքան խայտառակ սխալներով լեցը, որ „Кавказъ“ի (Ռուսաց պաշտօնական լրագրի) խմբագիր պ. Сталйнскій-ն այնպէս ներկեց և սրխոտրեց, որ մարդ տողերը կարդալուս՝ փշաքաղվում էր: Զղիտեմ կարո՞ղ էք հասկանալ թէ ոչ՝ որ Ռուսաց օրացոյց խմբագրելը չափազանց դիւրին է. իսկ

մեզանում յոյժ դժուար. որի համար պետք է զի-տենալ անշուշտ ,,Տօմարագիտութիւն'' որ առանց այդ՝ միշտ փառաւոր սխալանաց մէջ կընդնեն: Այժմ առաջարկում ենք ձեզ, ով խմաստակ Գրիչ, փորձե-ցէք գտնել մի անգամ օրացոյց խմբագրել. միայն ոչ համառօտ. այլ հանդերձ եկեղեցական երգեցողու-թեամբք և այլն. բայց գիտէ՞ք այն ևս ինչ ժամա-նակ, անշուշտ Յուլիսի կամ Օգոստոսի մէջ. այսինքն այն միջոցն՝ երբ դեռ ոչ մի Օրացոյց լոյս աշխարհ տեսած չլինի, որպէս մերը, որ Մայիսի 26 1877 թ. արդէն Գրաքննական Ատեանը թոյլատրել է 1878 թ. Օրացոյցը. պատճառ որ, դուք կարող էք տպուած Օրացոյցներից որպէս մի հասարակ գրագիր՝ վերցնել և արտատպել և ի հարկէ ի՞նչ կլինի այդ՝ կարեն դուշակել ընթերցողք:

Փառք Աստուծոյ տպարանները ձեզ մոտ են առատ, էլ ինչի՞ էք սպասում, խմբագրեցէք ու տեսէք...

Յետոյ ասում էք, ,,Օրացոյցը գլխաւորապէս մի-ջին և ստորին դասերի համար է''—շատ սխալ-վում էք պ. Գրիչ, քանզի աւելի շուտով կարելի է պնդել, բարձր դասերն առանց Օրացոյցի չեն մնում. օրինակի համար, Ռուսաստանում Օրացոյցներ կան սկսեալ՝ 3 կոպէկից մինչև 2 բուբլի. և սոքա ի հար-կէ հրատարակուելով լրագրերի մէջ՝ դեռ տարին չմտած բերել են տալիս ամենքը: Իսկ մեր Հայերի բարձր դասերից՝ եթէ կան այնպիսիները, որք ամօթ են համարում իրենց դրասեղանի վերայ ունենալ ,,Հայոց Օրացոյց'' գոնէ առնում են անշուշտ Ռու-

սաց, վերջապէս՝ առանց Օրացոյցի՝ չեն մնում. այս մի անհերքելի ճշմարտութիւն է: Կարելի է դուք ձեզ ևս դասում էք գլխաւոր դասին (թէ՛ և յայ-տնուեց ձեր ինչ լինելը) այդ իրաւունքունիք. վասն, զի եսականութիւնից՝ ամենքան յառաջ կդայ. և եթէ չէ՛ք գնում ,,Հայոց Օրացոյց'' ձեր կամքն է, կարող էք Մողդավեցիները գնել:

Ասում է և այն՝ որ ,,Օրացոյցի հատուածները ամենևին չեն արդարացնում վերնագիրը—,,Ծաղիկ Ընտանեաց'' („“)''. Իրաւ, ես չգիտէի որ մինչև այդ սատիճան պ. Գրիչը կատարեալ խմաստակ է եղած, և մինչ այնտեղ՝ որ չէ կարողացել հասկանալ ,,Ծա-ղիկ Ընտանեաց''ի բուն նշանակութիւնը. և այդ մարդը՝ ապաբաղդաբար կարծեմ Հայոց լեզուի ու-սուցչութիւն է անում. եթէ իրաւ է՝ ուրեմն խեղճ մանուկներ, անբաղդ օրիորդներ, որ ենթարկուած էք մի անպիտի դէկավարի՝ որ դեռ ինքն է կարօտ կըր-թութեան բովքին, որովհետև ,,Ծաղ. Ընտ.'' ինքն ըստ ինքեան վերնագիրը՝ պարզ ի պարզոյ ցոյց է տալիս, որ առ հասարակ մարդս հոտոտում է ծաղիկներից. և ի հարկէ ծաղիկները լինում են զանազան տեսակք, որոնք ունենում են զա-նազան հոտեր, և տեսակ տեսակ ձիւղերով ու տերևներով. և այնպէս մեր հատուածները՝ ունեն զանազան միտք, զանազան բովանդակու-թիւնք, ևս և զիւտք ընտանեկան վերաբերմամբ և այլն. և այս բոլորը՝ ամենայն պարզութեամբ հա-կանում է մտածող դասը... բայց թէ դուք պ. Գրիչ

ո՞ր դասին էք պատկանում, այդ մենք չգիտենք: Այժմ կարծեմ սովորեցիք վերնագրի պարզ նշանակութիւնը պ. Գրիչ և հետևաբար համոզուեցիք ու ի հարկէ ապաշաւեցիք...:

Պ. Գրիչ դուք մեր այս 1878 թ. „Ծաղ. Ընտ“ մէջ ամենից վեր էք դասում „զլխի մազերը մաքրացնելու թեփը հանելու և փափկացնելու զիւտը„ այնպէս որ սիրահարուել էք այս մասի վերայ. եթէ այդպէս՝ ուրեմն շտապեցէք հեռագրել մեզ, որ 2 փութ խիստ լաւ մածուն ուղարկենք ձեզ, ի հարկէ ձրի. որ դուք ձեր ամբողջ մարմնով, զլխով և ոտքով մտնէք մածդի մէջ և դուրս գաք հրապարակ Մատենախօսութիւն անելու. ուր կլինեն անմիջապէս կանգնած ի հարկէ և ձեր համախոհների խումբը... (երևակայեցէք ընթերցող թէ ինչ մի այլանդակ բան դուրս կգար):

Մեր „քննողական„ յօդուածները ձեզ երևում են „Գպրոցական վարժութիւնք„ եթէ այդպէս՝ ընդունեցէք ուրեմն, և կարելի եղածին չափ՝ լաւ հետազօտութեամբ վարժուեցէք. և շատ բաղդաւոր եմք որ ձեզ նման աշակերտներ ունենք...: Այո, պ. Գրիչ մեր մատենագրութիւնը ձեզ կուսուցանէ՝ նուրբ հմտութիւն մտաց, և կհասկացնէ՝ որ „ՓԱՐՈՍ“ի հրատարակիչն, որին դուք յիշում էք յոյժ անտեղի՝ այո՛ ականաւոր և բազմարդիւն զիտնականներից մինն է, ու հարազատ և պիտանի անդամ Ազգիս. և որ իրաւամբ կարող է պարծիլ իւր ոնշահասէր բնութիւնովը և ձրի ծառայութեամբն

Ազգիս. միով բանիւ, մենք շատ բաղդաւոր կլինէինք, կրկնում եմ, եթէ այ. պ. Մսերեանցների նմանները շատ ու շատ լինէին մեր մէջ, և կարծում եմ հաստատապէս՝ որ դուք հանդերձ ձեր բոլոր համախոհներով, չէք կարող երբէք մրցողութիւն անել նոցա հետ դրականական հանդէսների մէջ, և յոյս ունիմ՝ որ եսակամութիւնը մի կողմ դրած՝ ձեր խղճմտանքն անդամ կապիպէ ձեզ հանդիստ թողուլ այդ պատուական անձինքը. և միանգամայն լռել և խոստովանել՝ թէ ձեր արածը՝ կամ գրածն, ոչ այլ ինչ էր՝ եթէ ոչ՝ երևելի թերթեամտութիւն: Ես պաշտպանել չեմ կամենում Ազգիս այդ պատուական անդամներին, ըստ որում, նոքա՛ ունին իւրեանց հսկայ պաշտպանը. այլ ես, եթէ համարձակեցայ խօսել այսքանս՝ այն ևս խօսեցայ՝ որպէս Հայ երախտագէտ, որպէս Հայ՝ որ կարող չէ վերջապէս լռին վատ ասել և վատին լաւ: Թող Գրիչը այս խրատս լաւ իւր մտքում պահէ:

Իսկ, ինչ ճանում է՝ որ ձեզ զգալի չէ լինում մեր Ակիզեցւոյ կանոնի աղաւաղութիւնը՝ այդ իրաւունք ունիք. որովհետև „ցեցը միշտ լինում է իրանից„ ասում է առածը. դուք պատկանում էք կիսալուսաւորուած սերնդին. չգիտեմ ի՞նչ պատասխան պիտի տայ ձեր խիղճը Աստուծոյ առաջ:

Մեր ամեն մի գրուածքը՝ ունի իւր անհերքելի ճշմարտութիւնը: Բայց ո՞րպէս: Ահա՛ մեր ընդհանուր համառօտ հայեացքը:—Պ. Գրիչը իւր այդ „Մատենախօսութեան“ սկիզբը դնում է „Օրացոյց

1878 թ. Քրիստոսի և ,,Ծաղիկ Ընտանեաց'' ,,և այլն: Ուրեմն հարկաւ պարտական էր՝ քննելու Օրացոյցը. բայց ո՞ւր է քննութիւնը...: Օրացոյցը լինելով կրօնական գրքոյկ՝ ուստի պարտական էր պ. Գրիչը ամենայն նրբութեամբ վերցնել բոլոր օրացոյցները այս 1878 թ. և Տօնացոյցը. ու սկսէր քննել անաչառութեամբ որպէս մենք քննել ենք մեր ,,Ծաղիկ Ընտանեացի''. 1878 թ. մէջ: Իսկ 1878 թ. օրացոյցները ահա մենք քննեցինք պ. Տէր-Աբրահամեանինը, Էջմիածնականը, և պ. Գոմե-ինը՝ այս 1879 թ. ,,Ծաղիկ Ընտանեացի'' մէջ. խնդրում ենք ընթերցողաց տեսնել յիշեալ՝ և մեր օրացոյցների մէջ Դեկտեմբերի 21. ուր մէկը միւսից՝ բոլորովին տարբեր է. իսկ մերը՝ ուղիղ և հարազատ Տօնացոյցին հետ. ուրեմն խոհեմ ընթերցող, եթէ այս պ. Գրիչը կատարեալ ձեռնածու չէ, ապա ի՞նչ է...: Ինչպէս ասացինք, թողել է իւր վերնագրի քննութիւնը՝ ու սկսել է խօսել մեր հերոսը, 3 տողից սկսեալ՝ ,,պարբերական հրատարակութիւնների'' վերայ, որոնց անուանում է ,,խախուտ շինութիւններ,, ի հարկէ պ. Գրիչ կարող ես այդպէս անուանել. վասն զի, մեր պարբերական հրատարակութիւնների՝ խմբագրները և հրատարակիչները ,,Փորձի'' խմբագրի նման հարուստ մարդիկ չէին և չեն՝ որ քեզ նմաններին փող վճարէին, փողի տոպրակը ցոյց տային. ու դու էլ նրանց անձնատուր լինէիր, որպէս անձնատուր ես հոգւով և մարմնով սաքով ու գլխով ,,Փորձ''ին. ադնէ՛ ընթերցող, ուրեմն այս եթէ դատարկախօսութիւն չէ, ապա ի՞նչ է...: Ի՞նչ կապ ունէր օրացոյցը՝ ընդհանուր լրագրութեան հետ:

Յետոյ բաւականին վայր ի վերոյ օդի մէջ խօսելով՝ 338 երեսի 35 տողից սկսում է խօսելով ասել՝ ,,Գրականական հարստահարութիւն'' որով վերջը ասում է՝ կան պարոններ որք ,,շինում են մի տեսակ վաճառանոց'' այս անկապ կտոր գրուածքի վերայ մի լա՛ւ խնդալուց յետոյ ասել եմ կամենում, պ. Գրիչ, որ մեր մէջ գրականական հարստահարութիւն և մի տեսակ վաճառանոց՝ բացի ,,Փորձ''ից չկայ երբէք. այդ միմիայն ,,Փորձ''ն է: Որովհետև ,,Փորձ''ի մէջ ոչ մէկը ձրի չէ աշխատում. ամենքդ էլ ստանում էք ամեն մի տպած երեսի համար՝ բաւականին փող, դրամ, ուրեմն քո բերնիցդ աւելի մեծ են ջուխտ ականջներդ՝ քան ընդհանուր Հայկական ամբոխը. փոխ Աստուծոյ մեր լրագրութեանց աշխատակիցները՝ ողջ ձրի են. բացի՝ ձեր „ՓՈՐՁ''ից, որին կարելի է անուանել՝ Շատմարան գրականական հարստահարութեանց. ուրեմն սիրելի ընթերցող, եթէ այս աչքակապութիւն չէ, ապա ի՞նչ է, ասա՛ խնդրեմ...: Ո՞ւր մնաց Օրացոյցի քննութիւնը...: Յետ այսորիկ 339 երեսի 34 տողից սկսում է ասել „հեքիաթը „(Հայկաբան) թարգմանաբար մշակեցէք, հայացած „վէպ կունենաք: Արձանագրութիւններ օրինակել տուէք. մատաղաթ ձեռք բերէք: Վերցրէք Էֆի„մերտէից, Պղնձէ քաղաքից, կստանաք բաժանորդա-

„գրութիւն արծաթով ստացած գումարի կէսը բոլոր „ծախքը կծածկէ. մնացած փողը գրպաններդ կդնէք.„ Ահա՛ այսպէս վայրապար, սանձակորոյս մոլորութեամբ պ. Գրիչը խօսելով ձեռքերը սրա նրա փեշից բռնելով՝ ցնորաբանութիւններ է անում... ասենք թէ, բաժանորդագրութեամբ փող են ստանում, կէսը ծախքն է լինում պ. Գրիչ, խմացած լինէք որ այս՝ շա՞տ ազնիւ թեամբ ենք տեսնում՝ քան ղձեր ա-բարմունքը,—„ՓՈՐՁ"ի աշխատակիցքդ. վասն զի, դիցուք ցակոբը գիրք է հրատարակում, նա պարզապէս յայտնում է տպագրութեամբ՝ գրքի պայմանը, անունը և բաժանորդագինը, և վերջապէս ըստ ձեր կարծեաց՝ կէսը ծախքն է վճարում, իսկ միւս կէսը գրպանը դնում, իւր ուքնութեան վարձատրութիւն: Բայց դուք „ՓՈՐՁ"ի աշխատակիցներդ ստանում էք ամեն մի թերթի համար բաւականաչափ գումար. և այդ ի հարկէ մնում է ժողովրդից գաղանի. վասն զի „ՓՈՐՁ"ի տարեգրելին երբէք չէ հրատարակվում թէ աշխատակիցները վարձով են. թէ նոքա՝ ծառայում են գրամով. նշանակում է՝ որ դուք խաբեբայութեամբ փողեր էք որսում ժողովրդից, այն ինչ՝ հայկական ամբոխը, այնպէս է հասկանում, թէ „ՓՈՐՁ"ի աշխատակիցները վասն աղգասիրութեան և հայրենասիրութեան ու հասարակաց կրթութեամբ՝ պարապում են ձրի. բայց չգիտեն, որ այսպէս՝ փողեր, փողեր են եռում՝ „եռամեայ հանդիսի մէջ" բայց բոլորովին գաղանի կերպով և այդ փողերը՝ ամբողջ-

ջութեամբ մանում են ձեր գրպանը և ոչ թէ կէսը: Որպէս հաստատութիւն՝ ներկայացնում ենք բանասիրաց Ազգիս „ՓՈՐՁ"ի աշխատակիցների մէկի գործունէութիւնը...: „ՓՈՐՁ"ի աշխատակից պ. Պերճ Պռօշեանցն, որ մինչև անգամ խմբագրի գրանոցապետն էր, ի հարկէ և սիրելի նորան, նոյն իսկ միջոցին ապագրեց մի ցայտարարութիւն „ՓՈՐՁ"ի մէջ, բ. տ. № I 1877—78 թ. Յաւելուածի 86 երեսում, թէ՝ „Կռուածաղկի վիպասանութիւնը լոյս կտեսնի նախ „ՓՈՐՁ„ հանդիսի մէջ և ապա այնտեղից կարտատպուի առանձին գիրք, որ ես ստիպեալ „եմ բաժանորդագրութեամբ անել: Գինն է 1 մանէթ: „Բաժանորդաց անունները կը տպվին գրքի վերջումը:„ Ա.յս հրատարակութեան յետոյ՝ ուղարկեց ստորագրութեան թերթերը զանազան տեղեր: Եւ այսպէս „Կռուածաղկը" սկսեցին տպագրել՝ № II գրքից սկսեալ „ՓՈՐՁ"ի մէջ: Պ. Պ. Պռօշեանցն ստացաւ պ. խմբագրից ամեն մի թերթի վարձն կանխիկ: Նոյն իսկ միջոցին՝ նա ստացաւ և զանազան տեղերից 668 գրքի՝ „արծաթով ծանրաբեռնուած„ ստորագրութեան թերթերը 668 բուբլի արծ. գրամով. նայեցէ՛ք իմ սիրական ազնիւ ընթերցողք, ինչ վերին աստիճանի ճարպիկութիւն, և ահա այս իսկ է՝ „գրականական պտրդ հարստահարութիւն„ որ ոչ մի տուրուատութիւն՝ չէր կարող յաղթել սորան: Ասում են թէ՝ շրջանները ճարպիկ են, բայց հաւատացէ՛ք որ այսպէս ճարպիկութեամբ հնարագիտութիւն՝ ես ոչ մի ազգի մէջ չեմ տեսած: Որովհետև

գիրք տպագրելու միակ և եթ նպատակն է՝ որ գրուածքը, աշխատութիւնը, տարածուի, և այսպէս տպում են գիրքը, ով կամենում է գնում է. իսկ ով ցանկանում է որ շուտով կամ շատ տարածել՝ նա դիմում է երկու ճանապարհաւ. այն է՝ կամ տպագրում է բաժանորդագրութեամբ, կամ դիմում է որ և իցէ լրագրի, կամ ամսագրի, իսկ եթէ կամենում է՝ այնտեղից արտատպում են, որ ով ցանկանում է՝ գնում է: Բայց „ՓՈՐՁ“ի աշխատակիցը, նոյն և գրանոցապետը պ. Պերճն Պռօշեանց՝ այդպէս չընթացաւ. այլ նա՝ նախ տպեց „ՓՈՐՁ“ի մէջ, ստացաւ պ. Խմբագրից վարձը. իսկ յետոյ՝ բաժանորդագրութիւն ժողովեց, և տպեալ գրքից՝ դարձեալ ստացաւ վարձ. այնպէս որ, երկու տակ ստացաւ փող. և այսպէս պարզ ի պարզոյ երևում է՝ որ ոչ թէ հոգնելն է եղել, գրուածքը տարածել՝ այլ հոգս են արել փողը որսալու (որ լաւ յաջողել է). որսացէք որքան կամիք, ով աղգասէրներ, թողէք ձեր աչքերի դերանը և փնտուէք այլոց աչաց շնորհ, որպէս ասում է մարդարտավայլ Ս. Աւետարանը, „Զի՞ տեսանես զչիչ յական եղբօր քո, „և ի քում ական զգերանդ ոչ տեսանես: Կամ զկ„ա՞րդ ասես ցեղբայր քո, թող հանիցս զչիչ յա„կանէ քումմէ, և ահաւասիկ ի քում ականդ գերան կայ„: (8) Ո՛վ ձեռնածու Գրիչ ինչի՞ ես փակել աչքերդ, միթէ չի՞ս տեսնում ընկորդ արածը, որ մինչև

(8) Տես Մատթէոսի Գ. Է. 3 և 4 տնները:

անգամ մի սկաւառակից էք ճաշում...:—Ուրեմն պատուական ընթերցող, եթէ այս գաղանի վաճառականութիւն չէ՛, եթէ խաբեբայութիւն չէ՛, եթէ գլուխ թլլստել չէ՛, եթէ գլուխ եղել չէ՝ ապա ի՞նչ է: Օրացոյցի քննութեան հօ՛տ կա՞ր այստեղ:

Յետոյ սկսում է իմ „Դաւիթ Բէգի“ միսը ծամել, բայց ողորմելի Գրչի սուր ատամները չէ կարում, սկսում է փնտռել սրիչ՝ որ այն ևս չէ գտնում. և այնպէս շուարուելով զարմացմամբ թողում է: Բանասէ՛ր ընթերցող, սա եթէ երևայութիւն չէ, եթէ բթամտութիւն չէ, ապա ի՞նչ է...: Պ. Գրիչը խորքուն մտաւ ինքն իրեն կորցրեց, Օրացոյցը թռա՛, քննութիւնը մնաց Գրչի կոկորդումը, իսկ խեղճը աչքերը խփած ձեռքերը շոշափեց, բայց չգտաւ երկասայրի սլաք Օրացոյցին: Նա հեռուից ծակում էր Գրչի աչքերը, մինչև որ յետոյ յայտնում է պ. Գրիչը հրաշք, որ «Զարմանալի է, Գուլամիրեանցը վաճառական է...» Է՛հ քեզ ի՞նչ: Լաւ է որ քաղաքացի և պատուաւոր վաճառական է, հօ քեզ նման թափառական չէ...: Էհ, ինձ ինչ, որ դու թափառական ես, գրականութիւն խայտառակող ես, և ոչ թէ շինող, ինչ կուզես՝ եղիր, ինձ համար միևնոյն է... ուրեմն յարգելի ընթերցող եթէ այս յիմարաբանութիւն չէ, եթէ դատարկախօսութիւն չէ, ապա ի՞նչ է: Օրացոյցը սրա հետ ի՞նչ կապ ունէր: Յետոյ թռչում է թատրոնի վրայ խօսում մեր պ. վարձկանը, և այսպէս գրականական հաշուագէտը խառնում է ամեն բան՝ և շինում է գրականա-

կան մաճնաբրթօշ — Օրացոյց, պարբերական հրատարակութիւնք, բաժանորդագրութիւնք, գրեանք, վաճառականութիւն, թատրոնի հաշիւ, թէյի մեքենաներ, կողպէքներ, և չգիտեմ էլ ինչ, հազար ասսակ բան... Ուշիմ ընթերցող, եթէ սա թերուս ցնօրաբանութիւն չէ, եթէ օրի մէջ տուն շինել չէ, ասացէք աղաչեմ ապա ինչ է:

Յետ այսօրիկ, երբ թէ քննել է մեր գործունէութիւնը (???) յարգոյ ընթերցող եթէ սա վայրենի ցնդաբանութիւն չէ, ապա ինչ է...: Ժիր Օրացոյց, պ. Գրիչ վարձկանը՝ անունդ տուեց, ոտքիցդ պինդ բռնեց, բայց շփոթուեց. պ. Գրիչ! անբաղդութիւն չէ՞ այդ, հապա ինչ է: Ուրեմն հսկայ քայլերով քեզ երկար կեա՞նք ով ազգային մշակդ Օրացոյց, և Ծաղկդ Ընտանեաց:

Քանի մի տողից յետոյ՝ պ. Գրիչը ցաւում է, որ տասնեւերկու տարուայ մէջ, չէ՛ կարողացել գրաւել մեր „Նոր տաղարանը" որ պէտք է բռնէր՝ չարչարէր, և հոգին հանէր... խեղճ „Նոր տաղարան" ինչ լաւ աղտոտեցիր այդ սև Թանաքոտ Գրչից, թէ չէ միանգամայն վրայ կպրծնէր՝ և կուլ կտար... Խոհական ընթերցող, եթէ սա շրջմոլիկ դատարկաբանութիւն չէ՝, հապա ինչ է... Օրացոյց „Նոր Տաղարան", ինչ կապ...: Յետոյ երբ տեսնում է՝ տուհասարակ մեր գրեանց յաջող ընթացքը՝ սկսում է փորը բռնելով՝ իմ „Դաւիթ Բէգի" և „Այրի Վանայ Ստորագրութեան" գրեանց հաշիւը տեսնել. պ. Գրիչը ցաւում է որ ինձ՝ չէ կարողացել որսալ,

որպէս գէր, կարողանար իւր ճարպիկ ձեռնածութեամբ՝ փող ստանալ ինձնից,—ես քո "ՓՈՐՁ"ի խմբագիրը չեմ, ես և, ոչ քո ասածը: Տեսնում ես ընթերցող, պ. Գրիչը փողի հաշիւները տեսնելուն պէս՝ մոռանում է ամեն բան, և լինում է անձնատուր. և սկսում է տէնդային ցաւերի մօտենալ, և օ՛րը ցերեկով՝ ընկղմվում է տարտարոսական երազների մէջ. ուր մօտենում են նորան դեւերը և սատանաները, որոնց երկիւղից յանկարծ „էՖէմերան" և „Պղնձէ քաղաքի պատմութիւն" գոռալով զարթնում է ու այնպէս անհամ, ալանի կերպով բերում է մի քանի տող „Դաւիթ Բէգի" և „Այրիվանայ" գրքերից, և որպէս առասպելաբան՝ ասում է և անցնում: բայց երբ յանկարծ միտքն է ընկնում Օրացոյցը՝ խսկոյն թողում է և փախչում այնպէս՝ որպէս բոցավառ կրակը մարդուց եռեւից...

Դու պ. Գրիչ, եթէ իրա՞ւ մտածող էիր Ազգի օգտին՝ և աշխատող էիր զիշեր ցերեկ Նորա մանկանց կրթութեանն՝ ապա ո՞ւր էիր անցայտացել „ՓՈՐՁ"ի հրատարակուելուց առաջ, որ ոչ մի պարբերական թերթերում քո նշոյլը չկար...: Բայց երբ „Փորձ"ը դուրս եկաւ, դու Նորան խսկոյն ճանկեցիր...: Համա դատար հա՛...:

Մարդս, կամայ ակամայ շուարվում է երբ տեսնում է այսպիսի պլանդակ, անօրինակ և խառնիճաղանչ ընթացք գրականութեան մէջ, որ պ. Գրիչ խմբագակը ամբողջ 12 երես պարապացրել է, վերնագիրը գրել է „Օրացոյցի քննութիւն",

բայց յանկարծ նորան թողել է՝ և մոլորել է ամբողջ յօդուածի մէջ՝ Բաբելոնեան խառնակութիւն։—Ուրեմն, անաչառ ընթերցողք, եթէ այսպիսի արարմունքը՝ չափազանց ոգիտութիւն չէ՝, և չափազանց յանդգնութիւն չէ՝ ասացէք խնդրեմ ապա ի՞նչ է...։ Օրինակի համար մի մարդ ասում է թէ, պատրաստել եմ և անկել լաւ պտղատու այգի, բայց երբ մտնում ես մէջը զբոսնելու՝ տեսնում ես որ այգի չէ, այլ պարտէզ է, ուր ցանած է սոխ, սխտոր, բակլայ, աւելուկ և այլն։ Կամ մի մարդ, բաց է անում նոր խանութ, ճակատի վերնագրի վրայ գրած է „Կարմիր ապրանք“ բայց մտնում ես մէջը՝ տեսնում ես խմէքեղէն, գինի, օղի, քացախ և այլն։ Ահա այսպէս է ընթացել և պ. վարձկան Գրիչը, գլխումը դրել է „Օրացոյց“ բայց մէջն է „Վայրացոյց“։

Ուսեալ և կրթեալ ազգայ մէջ՝ օրէցօր ընդարձակվում է գրականութիւնը, նայում են միմեանց վրայ որպէս եղբայր, ցոյց են տալիս միմեանց օգտաւետութեան ճանապարհներ ընդհանուրի կրթութեան, իսկ մեզանում ապարդիւնաբար մինը գրում է՝ իսկ միւսը պախարակում, և այս ի հարկէ յառաջ է գալիս անհասկացողութիւնից, այս ատելի և ընդհակառակ զզվելի արարմունքը՝ մեր Հայի կարծես յատկանիշն է. վերցրէք մեր Հայոց պատմութիւնը, և դուք կտեսնէք որ շատ տեղեր, մեր Հայերն են իրենց տունը քանդել վերցրէք ներկայ դարը,—մեր Հայոց պարբերական հրատարա-

կութիւնքը՝ միշտ եղել են միմեանց ատելի, նոցա խմբագրները միշտ և հանապազ, անհաշտ են եղել միմեանց հետ՝ և են մինչև այժմ։ Վերցնենք մեր այժմեան՝ „Մեղու Հայաստանը“ „Մշակը, Արարատը և փորձը“ և նորածին „Մանկավարժական թերթը“ և դոցա թերթերի մէջ մեր ընդհանուր Հայեացքը դարձուցանելուց յետոյ՝ կտեսնենք ամենայն պարզութեամբ՝ որ ոչ մէկը միւսին չէ սիրում, մինը գրում է՝ իսկ միւսը պախարակում։ ողջ Հայ զործողներ են, և Ազգային մշակ, բայց միմեանց թշնամի... ինչի՞,—որովհետև մեր Հայերի յատկանիշն է՝ միմեանց չհաւանել, միմեանց անզոսնիլ, միմեանց արհամարհել և վերջապէս միմեանց չսիրել... բայց այսպիսի ընթացքով միթէ գրականութիւն կհարստանայ, կամ մի՞թէ կծաղկի... երբէ՛ք, ցաւալի վիճակ։

Մենք ինչքան կարողացել ենք անելու՝ արել ենք, անում ենք, և կանենք։ իսկ դուք պ. Գրիչ, ոչինչ չէք արել, այլ սորա նորա միսը ծամելով՝ ապրել էք, և ապրում էք...։ Փառք և պարծանք ձեզ, այդ ևս գործողութիւն է։ Ամենայն մարդ ապրում է, բայց որպէս՝ և ինչի՞ համար...։—Ահա՛ այս է խնդիրը։ Շատ յարմարութեամբ պատկանում է պ. Գրչին և հետևեալը՝ „Լաւ համոզուած ենք, որ շատ մարդիկ կան միշտ չարախօսութիւն են տանում, վասն զի՝ նոքա իրանց կենաց մէջ ամենևին սովորած չեն բարի խօսելու։“ (8) Ո՛վ չէ տե-

(8) Տես Խմաստասիրութիւն Մարգիպային 1844 թ. երես 99։

սկզբունքոյ՝ թող կարդա ,,Փորձ"ի մէջ տպուած պ. Գրչի Մատենախօսութիւնքը:

Վերջապէս՝ կարծեմ մեր այս բոլոր բարոյական նախաձաշիկը, ճաշը, ևս և ընթրիքը՝ դուք ախորժակով վառաց լափաս կրվայելէք, (անուշ լինի) որով բոլորովին կը յագենաք. որ այլ ևս, ձեր այդպիսի քաղցածութիւնից՝ երբէք չեն թափուիլ ձեր սրտի մելամաղձը, որով չեն ախտոտուիլ ,,Փորձ"ի մաքուր թղթերը և պատուական հատուածները:

Այս բոլորից յետոյ՝ յուսով ենք, որ մեր մեծարելի ընթերցողք, յոյժ ուրախ պիտի լինին՝ մեր այս քննողական պատասխանատուութեամբ հերքմանը, մի այնպիսի անձի դէմ՝ որ սովոր է սկսեալ ,,Փորձ"ի լոյս աշխարհ երևալուց՝ ախտալի և թիւնալի վարակուած Մատենախօսութիւններ անել. որք վնաս են բերում թէ Ազգային գրականական հարստութեան բարգաւաճմանն՝ և թէ Հայկական ուսման զիտութեան ծաւալմանն. և որ ընդդէմ է բոլորովին քննողական կանոնի:

Եւ այս բոլորի առիթն է՝ որ մեր ամեն կարողութեամբ ընդունելի և արմատախիլ անենք այսպիսի խայտառակ Մատենախօսութեանց՝ Հայկական Մատենագրական գանձարանից. որ գոնէ չամաչենք օտար ազգաց պատուական Հայկաբանների մօտ. և չաղաւաղուի այդպիսի վարձկանների և իմատակների շնորհիւ՝ գրաքննողական նուրբ և ամբիծ կանոնը: Վերջացնում եմ խօսքս հեռաւեալ գաղ-

գեական առածով. — La critigue est facile mais l'art est difficile.—այն է՝ քննութիւնն դիւրին է, բայց արհեստը դժուար:

Այս մեր „քննութեամբք պատասխան և հերքումն" արդէն գրեցի և վերջացրեցի անցեալ Մարտի 21-ին. իսկ թատրոնական վերաբերեալ գրուածքի մասին՝ որոշել էինք բողոք բանալ Տփխիսում հաշտարար դատաւորի մօտ. որի առթիւ մի պատուիրած (заказное) նամակ գրեցինք ,,Փորձ"ի խմբագիր և հրատարակիչ պ. Ա. Յովհաննիսեանցին. ուր առաջարկել էինք համաձայն օրէնքաց՝ յայտնել մեզ գրաւոր ,,Գրչի" ով լինելը. (թէև մենք գիտէինք): Բայց պ. խմբագիրը բոլորովին լռեց: Ուստի պատրաստեցի բոլոր մեր իրաւագրերը և բողոքը. և Յունիսի սկզբում Ռուսաստան գնալու միջոցիս՝ Տբփխիսում ցնացի քանի մի օր որ բողոքէի: Այս միջոցիս յանկարծ ինձ պատմեցին որ պ. Գրիչը սաստիկ ջերմախոտութեան-տէնդային ցաւոց մէջ ընկղմուած է...: Ճշմարիտ ասել խիստ ցաւեցայ, և այս իսկ առթիւ՝ մեր խղճմտանքը մեզ ստիպեց որ թողնենք քաղաքական բողոքը. բաւական համարելով իւր ոգորմելոյ տկարութիւնը...:

Աբգար Ստեփաննոսեան Գուլամիրեանց:

1878 թիւ Նոյեմբերի 10ն
Յերևան:
և Հայոց՝
ՌՅԻԸ—1328 թ.
Սահմի 19.

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.С.Р.-А Публичная Библиотека
7/XI-1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Գին 15 կոպ.

Типографія Бр. С. и А. Давидіанца на Голо. прос. д. № 7

ՄԵՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԵՐԸ

	Ր.	Կ.
Ա. Նոր Տաղարան կամ Ազգային Երգարան 1866.		30.
Բ. Դաւիթ Բէգ ընտիր մատենագրութիւն Սիւնեաց 1871		60.
Գ. Ստորագրութիւն հռչակաւոր մեծի ուխտին Այրիվանայ Ս. Գեղարդայ. հանդերձ պատմական ծանօթութեամբք. 1073 . .	1	,,
Դ. Ծաղիկ Ընտանեաց Ա. տարի 1876 . .		10.
,, ,, Բ. ,, 1877 . .		15.
,, ,, Գ. ,, 1878. (սպառեալ).		
Ե. Սենեքերիմ Թագաւոր Հայոց Վասպուրականի ողբերգութիւն 5 արարուածով 1878. .	1	,,
Զ Օրացոյց 1876, 1877, 1878 Թ. Թ.		,,
Է. Օրացոյց մեծադիր, ընդ Ծաղ. Ընտ. 1879 .		30.
,, Փոքրադիր. 2 պատկերիւ . .		15.

Շուտով կհրատարակենք մեր Թարգմանութիւնը.

,,Ինչ բան է Ժանտախտը. ինչ բանով կարելի է փրկուել Նրանից, և այլ տարատեսակ տեղեկութիւններից. ժողովրդական հասարակաց մատչելի խրատ:-Գինն լինելու է 15 կ:

ԳԻՆՆ Է ՏԵՏՐԻՍ 15 Կ.

Յանձնարարեալ կարդալ է տալ հեղինակաւոր հասցէով՝

Въ Г. Эривань.

АБГАРУ СТЕПАНЯНУ

ГУЛАМИРЯНЦЪ.

20952

20.13